ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ,ք.Կապան Շահումյան 20/32, 3301:
Հեռ. (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1210: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

... Աստված է վկա, Արցախին հաղթող չի եղել, չկա...

Վարդան Հակոբյան

Սյունյաց երկիր

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 27 ՓԵՏՐՎԱՐԻ 2018Թ.
№ 5 (463)

www.syuniacyerkir.am

30 տարի առաջ արցախցին ոտքի կանգնեց՝ մերժելով իրեն պարտադրված օտար լուծը

РЕШЕНИЕ ВНЕОЧЕРЕДНОЙ СЕССИИ СОВЕТА НАРОДНЫХ ДЕПУТАТОВ НКАО XX СОЗЫВА

О ХОДАТАЙСТВЕ ПЕРЕД ВЕРХОВНЫМИ СОВЕТАМИ АЗЕРБАЙДЖАНСКОЙ ССР И АРМЯНСКОЙ ССР О ПЕРЕДАЧЕ НКАО ИЗ СОСТАВА АЗЕРБАЙДЖАНСКОЙ ССР В СОСТАВ АРМЯНСКОЙ ССР

Заслушав и обсудив выступления депутатов областного Совета народных депутатов НКАО о ходатайстве перед Верховными Советами Азербайджанской ССР и Армянской ССР о передаче НКАО из состава Азербайджанской ССР в состав Армянской ССР, внеочередная сессия Нагорно-Карабахского областного Совета народных депутатов решила: Идя навстречу пожеланиям трудящихся НКАО, просить Верховный Совет Азербайджанской ССР и Верховный Совет Армянской ССР проявить чувство глубокого понимания чаяний армянского населения Нагорного Карабаха и решить вопрос о передаче НКАО из состава Азербайджанской ССР в состав Армянской ССР, одновременно ходатайствовать перед Верховным Советом Союза ССР о положительном решении вопроса передачи НКАО из состава Азербайджанской ССР в состав Армянской ССР.

20 февраля 1988г.

Նախագահ Սերժ Սարգսյանի ուղերձը Արցախի վերածննդի օրվա եւ Ղարաբաղյան շարժման 30-ամյակի առթիվ

Սիրելի՛ հայրենակիցներ,

1988 թվականի փետրվարի 20-ին Լեռնային Ղարաբաղի մարզխորհրդի արտահերթ նստաշրջանն ընդունեց որոշում, որով արտահայտում էր արցախցիների ազատ ինքնորոշվելու կամքը: Երեք տասնամյակ առաջ Արցախի արդար պահանջին ու պայքարին միացավ ողջ հայությունը: Այսօր նշում ենք այդ պատմական շրջադարձային իրադարձության 30-րդ տարեդարձը, որն Արցախի Հանրապետությունն իրավամբ հռչակել է Արցախի վերածննդի օր:

Ավելին, այն դարձավ հայ ժողովրդի վերածննդի օրը: Մոնթեն ճիշտ էր ասում, երբ պնդում էր, որ եթե կորցնեինք Արցախը, կշրջեինք հայոց պատմության վերջին էջը: 1988 թվականի փետրվարի 20-ը հայ ժողովրդի միասնության, վճռականության եւ ազգային զարթոնքի պահն էր:

Մեր ժողովրդի խաղաղ եւ օրինական քայլերին Ադրբեջանը պատասխանեց Սումգայիթում եւ այլ վայրերում կազմակերպված կոտորածներով: Այդ օրերին արդեն պարզ դարձավ, որ Արցախի ժողովուրդը դատապարտված է ֆիզիկական բնաջնջման կամ հաղթանակի:

Մեզ պարտադրվեց պատերազմ: Պատերազմ սանձազերծողները վստահ էին, որ մեծ առավելություն ունեն եւ, հայերին ոչնչացնելով ու Արցախը դատարկելով, Ղարաբաղի հարցը կփակեն արագ եւ ընդմիշտ: Երեք տասնամյակների հեռավորությունից այսօր արդեն վստահորեն կարող ենք պնդել, որ Ղարաբաղյան շարժումը փրկել է հարյուր հազարավոր կյանքեր:

Արցախի հայությունը, թիկունքում ունենալով համայն հայության աջակցությունը, կարողացավ պատվով դուրս գալ այդ ծանր փորձությունից: Այսօր մեզ թշնամի անվանողներն ինչում ասես մեզ չեն մեղադրում, բայց Արցախի ժողովրդի միակ մեղքն այն է, որ նա չի պարտվել եւ չի բնաջնջվել այդ պատերազմում:

Սիրելի՛ հայրենակիցներ,

Ղարաբաղյան շարժումը պատմության որոշակի փուլում պետք է փոխակերպում ապրեր: Պետականության հռչակմամբ շարժումը ոչ թե մարեց, այլ դարձավ պետական քաղաքականություն: Համազգային պոռթկումի եւ զարթոնքի պսակը մեր երկու հայկական պետություններն են:

Ղարաբաղյան շարժման 30-րդ տարեդարձը մենք տոնում ենք՝ լսելով նույն հոխորտանքները, նույն սպառնալիքները, ինչ 30 տարի առաջ: 30 տարի շարունակվում է հայատյացության քարոզչությունը: Թվում է, թե ոչինչ չի փոխվել: Սակայն մենք ենք փոխվել: Արդեն 30 տարի ադրբեջանական լուծը թոթափած ազատ Արցախը զարգանում է առաջանցիկ տեմպերով՝ թե՛ տնտեսապես, թե՛ քաղաքականապես, թե՛ մշակութապես:

Մեր հասարակական գիտակցության մեջ գուցե եւ արդարացված ընկալում կա, որ արվածը բավարար չէ: Ուստի, մենք անընդհատ պետք է բարձրացնենք մեր պահանջների եւ ակնկալիքների նշաձողը:

Որպես ժողովուրդ եւ պետություն՝ մենք դեռ շատ գործ ունենք անելու: Հսկայական անելիք կա բոլոր ասպարեզներում, բայց այն, ինչ միասին արել ենք անցած 30 տարիների ընթացքում, երբեմն՝ ծանրագույն պայմաններում, իսկապես քիչ չէ: Ակնհայտ է՝ սա վերջին դարերի հայոց պատմության թերեւս ամենակարեւոր երեսնամյակն է: Մենք անելու ենք անհամեմատ ավելին եւ կրկին համարելու ենք, որ քիչ է:

Անազատությունը չունի արդարացում, եւ ազատությունը չունի այլընտրանք: Հայաստանի եւ Արցախի Հանրապետություններում մենք կառուցում ենք ժամանակակից եւ ժողովրդավարական պետություններ: Մենք անվերապահորեն հարգում ենք մարդու հիմնարար իրավունքները, քանի որ ողջ հայ ժողովրդի համար ազատությունը եւ մարդու արժանապատվությունը բացարձակ արժեքներ են:

Կեցցե՜ Հայաստանի Հանրապետությունը:

Կեցցե՜ Ղարաբաղյան շարժման ծնունդ Արցախի Հանրապետությունը:

Կեցցե՜ն Ղարաբաղյան շարժման առաջամարտիկները:

president.am
20.02.2018

Սերո Խանզադյանի նամակները ԽՄԿԿ ԿԿ-ի գլխավոր քարտուղար Լեոնիդ Բրեժնեւին

Ղարաբաղի Մարզկոմի առաջին քարտուղար Կեւորկովի զեկուցումից հետո, որը, նացիոնալիզմի դեմ պայքարի անունով սքողված, երկպառակտություն է սերմանում Ինքնավար Մարզում, ես վճռեցի հեռագրել ընկեր Ալիեւին, այն մասին, որ Կեւորկովի զեկուցումը շատ տեղեր կրում է բացարձակ պրովոկացիոն բնույթ, ոչնչով չի նպաստում հայ եւ ադրբեջանական ժողովուրդների բարեկամությանը: Այդ օրից անցել է արդեն ամիսուկես, ես պատասխան չեմ ստացել իմ հեռագրին, իսկ այդ զեկուցման հակահայ, վնասակար եւ վտանգավոր գործունեությունը համառորեն շարունակվում է տարածվել: «Խորհրդային Ղարաբաղ» թերթը 1975 թվականի 23-ին մարտի տպագրել է այդ զեկուցումը: Ապա նաեւ, դրանից հետո մարզի շրջանների բոլոր թերթերը ամիսուկես շարունակ նյութեր են տպագրում, որոնց մեջ բորբոքվում է նույն այդ վտանգավոր կրակը:



Սա վկայում է այն մասին, որ խախտվում են կոմունիստական բարոյականության եւ լենինյան ազգային քաղաքականության բոլոր սկզբունքները:

Պատահական չէ, որ օսմանյան իմպերիալիզմի ձեռքով կատարված հայերի ցեղասպանության հիշատակի օրը, աշխարհի հայկական թերթերից միակը «Խորհրդային Ղարաբաղն» էր, որը թեկուզ կես բերան, թեկուզ մեկ բառով բան չասաց այդ համաժողովրդական ողբերգության մասին: Եվ սա այն օրերին, երբ խորհրդային մամուլը, այդ թվում «Պրավդան», «Իզվեստիան», «ՏԱՍՍ»-ը իրենց հրապարակումներում հարգեցին մեծ ջարդի 60- ամյակի սգո օրը, դատապարտեցին թուրքական իմպերիալիզմը, իբրեւ ցեղասպանության, իբրեւ մարդկության դեմ կատարված ու կատարվող այդ ոճրագործությունների գլխավոր հեղինակի: Ընդհակառակը, հենց այդ օրը, ապրիլի 24-ին, «Խորհրդային Ղարաբաղ» թերթն իր էջերում նյութ տպագրեց մարզի պրոֆմիության պլենումի մասին, որի մեջ, չես հասկանում ինչ իրավունքով, վիճարկվում է Ղարաբաղի հարցը, այն, թե, իբր, Ղարաբաղը Հայաստանին չի պատկանել: Անհասկանալի է նաեւ, թե ինչպես է շատ կարճ ժամանակվա ընթացքում անցկացվել մի հապշտապ կոմպանիա, որը այլ կերպ չես անվանի, քան կեղծ հանրաքվե, քանի որ զանազան կազմակերպությունների ապօրինի ու գաղտնի ժողովների արձանագրությունները եւ որոշումները հրապարակվել են մարզային ու շրջանային թերթերում, ապա հարց է առաջանում՝ այդ ամենը չի՞ արվել Ղարաբաղի տասնյակ հազարավոր բնակիչների կամքի դեմ, որոնք մի քանի տարի առաջ իրենց ստորագրություններն են ուղարկել Մոսկվա, խնդրելով Հայկական Ղարաբաղի մարզը վերադարձնել Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությանը: Արդյոք սա չի՞ նշանակում, որ մարզի ղեկավարությունը դրանով ձգտում է մերժել, սրբել, վերացնել ժողովրդի արդար կամքն ու պահանջը:

Թե՛ ազգային, թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական նկատառումներով, Ղարաբաղի Հայկական Ինքնավար Մարզը պետք է մտնի Հայկական Հանրապետության կազմի մեջ: Հենց սրանից էլ զայրացուցիչ է այն փաստը, որ մարզկոմի առաջին քարտուղարը ինքնագլուխ վճռել է իր կամեցողությամբ սահմանել Ղարաբաղի պատկանելության հարցը: Ո՞վ է նրան լիազորել նման բան: Եվ քանի որ նա կատարել է այդ ապօրինի քայլը, այն էլ պլենումում, մամուլում, ուստի անհրաժեշտ է նորից անդրադառնալ այդ հարցին:

Իբրեւ կոմունիստ, իբրեւ բազմաթիվ գրքերի հեղինակ, որոնց մեջ ես ներկայացնում եմ ժողովուրդների բարեկամությունը եւս, ես խորապես համոզված եմ, որ հենց Խորհրդային պետության ստեղծման առաջին օրերից օրակարգի մեջ մտած Ղարաբաղի հարցը կլուծվի, այն կվերադարձվի Հայկ. ԽՍՀ-ին, դրանով ավելի կամրապնդվի հայ եւ ադրբեջանական ժոդովուրդների միջեւ եղած բարեկամությունը, ինչ-որ չափով կբարձրացվի մեր սոցիալիստական կարգերի վարկաբեկված հեղինակությունը:

13 մայիսի 1975թ.

Թանկագին Լեոնիդ Իլյիչ

Լեռնային Ղարաբաղի մարզային կուսակցական մարտյան պլենումում (1975թ.) ամեն ինչ արվեց, որպեսզի ցեխին հավասարեցվի Սոցիալիստական Հայաստանի անունն ու ազգային արժանապատվությունը: Բանը հասավ այնպիսի սրբապղծության, որ երիտասարդ Խորհրդային Ռուսաստանի կատաղի թշնամուն, միլիոնավոր հայերի, ռուսների, հույների, բուլղարացիների, ասորացիների ոչնչացնողին՝ Թալեաթ փաշային, մեր Խորհրդային մամուլում («Խորհրդային Ղարաբաղ» 23 մարտի, 1975թ.) անվանեցին ընդամենը «տհաճ անձնավորություն»: Այդպիսի գնահատական տրվեց բազմաթիվ ժողովուրդների թշնամուն, օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության կազմակերպողին ու ոգեւորողին:

Այդ նույն ժամանակ, իրենց մարդկային ու ազգային զգացմանքները վիրավորված Խորհրդային Հայաստանի բազմաթիվ ներկայացուցիչներ վրդովված դիմեցին անձամբ Ձեզ ու այլ ինստանցիաների, համառորեն խնդրելով դատապարտել Ադրբեջանական ԽՍՀի ղեկավարների գործողություններն ու պատժել մեղավորներին: Եվ, ինչպես հայտնի դարձավ մեզ, Խորհրդային Միության Կոմունիստական Կուսակցության Կենտրոնական Կոմիտեն ընդամենը ի ցույց էր դրել ինքնավար մարզի կուսակցական. կազմակերպությանը՝ թույլ տված սխալների համար:

Սակայն որքան մեծ եղավ համընդհանուր զարմանքը, երբ նորից, այսօր «Проблемы мира и социализма» աշխարհիս ամենամասսայական ամսագրում (1977թ., թիվ 6), որը համարվում է մոլորակի կոմունիստական ու բանվորական կուսակցությունների տեսական ու ինֆորմացիոն հրատարակչություն, լույս է տեսնում 32 լեզուներով ու տարածվում աշխարհի 145 երկրներում, խոսվում է Ղարաբաղի տեղի մասին… Ամսագրի միանգամայն բնական հարցին՝ «Ինչո՞ւ Լեռնային Ղարաբաղը գտնվում է Ադրբեջանի կազմի մեջ եւ ոչ թե Խորհրդային Հայաստանի, որից այն բաժանված է միայն հողի նեղ շերտով», պատասխանում են, որ թեեւ հայկական ինքնավար մարզը մոտիկ է Հայկական Հանրապետությանը, սակայն նրանք, իբր, բաժանված են բարձր սարերով: Նման բնորոշումը. թույլ տվեք ասել, ոչ միայն անհեթեթ է տեխնիկայի մեր դարում, այլեւ անճիշտ:Դարերի ընթացքում երբեք Ղարաբաղի հայկական պատմական մարզը մայր Հայաստանից բաժանված չի եղել: Այն հարցին, թե արդյոք բոլորն են գիտակցաբար ընդունել այն փաստը, որ պատմական հայկական մարզը կտրված է մայր Հայաստանից, եւ մտցված նոր գոյացած Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմի մեջ, պատասխանում են հետեւյալ կերպ. «Եղան մարդիկ, որոնք հայտարարեցին. «Թող ես վատ ապրեմ, բայց կապված լինեմ Հայաստանի հետ»»:

Ինչ կա որ, եթե այդ արտահայտության մեջ «Հայաստան» բառը փոխարինենք «հայրենիք» բառով, ապա կարծում եմ, որ դա կասեր արժանապատվություն ունեցող յուրաքանչյուր մարդ, ով սիրում է իր հայրենիքը: Ամեն մարդ հպարտությամբ կարող է հայտարարել, որ նա իր հայրենիքը չի ընտրել եւ, որ նա համաձայն է ամեն վիճակի, միայն թե իր հայրենիքի հետ լինի: Այո՝ «թող ես վատ ապրեմ, բայց Հայաստանի հետ լինեմ»: Սա Ղարաբաղի կամքն է, ղարաբաղցի հայի իղձը:Ես խորապես համոզված եմ, որ «Проблемы мира и социализма» ամսագրի խմբագրական կոլեգիային, որի մեջ մտնում են 53 երկրների կոմունիստական ու բանվորական կուսակցությունների ներկայացուցիչներ, նաեւ այդտեղ հրապարակված «Մենք տեսանք ազգերի եղբայրությունը» հոդվածի հարգելի հեղինակներին մոլորության մեջ են գցել: Մի բան է միայն անհասկանալի, ո՞ւմ է ձեռնտու այդպես բացեիբաց պրոպագանդել մեր երկրին ու մեր հասարակարգին խորթ պանիսլամական գաղափարները:

Ինչպես կարելի էր այն օրերին, երբ քննարկվում էր ԽՍՀՄ-ի նոր Սահմանադրության նախագիծը, 32 լեզուներով գրել ու աշխարհի 145 երկրներում տարածել, թե «Լեռնային Ղարաբաղի հայ ժողովուրդը պետականություն է ձեռք բերել Ադրբեջանում ու այդ բախտը ընդունել է կամովին»: Դա պատմական իրականության կոպիտ աղավաղում է, կրկնապատիկ խեղաթյուրում:

Նախ՝ Լեռնային Ղարաբաղը միշտ էլ պատկանելիս է եղել Հայաստանին, նրա մի անբաժան մասն է, որտեղ դեռեւս 280 տարի առաջ, առաջին անգամ սկիզբ դրվեց հայերի ռուսական օրիենտացիային: Հայ ժողվուրդ հասկացողությունը միասնական է, ամբողջական, ինչպես ռուս ժողովուրդ, ինչպես ուկրաինական ժողովուրդ:

Երկրորդը՝ Լեռնային Ղարաբաղի հայկական բնակչությունը (1920-ական թվականներին ողջ բնակչության 94 տոկոսն էր) երբեք կամովին չի ընդունել այսօրվա «բախտը», ըստ որի, իրականում կտրված է իր հայրենիքից: Նման «բախտը» ինքնին անարդար է, որը պետք է լիկվիդացվի-վերացվի, որովհետեւ ինչպես Լենինն է ասել. «Ոչինչ այնպես չի խաթարում պրոլետարական դասակարգային համերաշխության զարգացմանն ու ամրապնդմանը, ինչպես ազգային անարդարությունը»:

Թանկագին Լեոնիդ Իլյիչ

Ամբողջ հույսը Ձեզ վրա է, որ Դուք կվճռեք վերջապես մի հարց, որը ավելի քան կես դար անարդարություն է մարմնավորում:

Մեր միասնական հզոր պետության սահմաններում գտնվող զուտ հայկական մարզը, ավելի քան 80 տոկոս հայկական բնակչությամբ, հայկական դպրոցներով, պետական հայերեն լեզվով պետք է գտնվի Խորհրդային Սոցիալիստական Հայաստանի կազմում:

Այս հարցի արդարացի լուծումը կգնահատվի որպես ազգային քաղաքականության հաղթանակ:

1977թ. հուլիս

Արցախյան ազատագրական շարժումը. սկիզբ

Արցախը միշտ իր ուրույն տեղն է ունեցել հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարում: Դարեր շարունակ Արցախն ու Սյունիքը Արեւելյան Հայաստանում ծավալված ազատագրական շարժումների հիմնական կենտրոններ են եղել: Մեր ժողովրդի պատմության բախտորոշ պահերին արցախցիները թշնամու դեմ պայքարի առաջին շարքերում՝ իրենց հայրենասիրությամբ ու արիությամբ նորանոր սխրանքների են կոչել սերունդներին:

Դեռեւս անցած դարի 20-ական թթ. սկզբներին, խորհրդային իշխանության ջանքերով Արցախի լեռնային մասը, առանց նրա հիմնական բնակչության՝ հայության կամքը հաշվի առնելու, կուսակցության Կովկասյան բյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի անօրինական որոշմամբ, բռնակցվել էր Խորհրդային Ադրբեջանին: Դրանից հետո Ադրբեջանի խորհրդային իշխանությունները ծրագրված աշխատանքներ էին սկսել Արցախը հայաթափելու համար: Այդ քաղաքականությունը նրանք կարողացան իրականացնել հայկական Նախիջևանում, որը բոլշեւիկյան ղեկավարության որոշմամբ նույնպես մտցվել էր Խորհրդային Ադրբեջանի կազմի մեջ: Նախիջեւանի այդ ինքնավար հանրապետությունն ընդամենը մի քանի տասնամյակների ընթացքում լիովին հայաթափվեց եւ բնակեցվեց «ադրբեջանցի» անունը ստացած թուրքերով:

Լեռնային Արցախի բնակչությունը շուրջ 70 տարի անընդմեջ պայքարել էր ադրբեջանական իշխանությունների հայավեր քաղաքականության դեմ: Արցախն այդ երկարատեւ ու դաժան գոյամարտի տարիներին շատ անմեղ զոհեր է տվել, բայց կնճիռը մնացել էր անլուծելի:

Խորհրդային կենտրոնական իշխանությունների անտարբերության եւ թողտվության պայմաններում Ադրբեջանի ղեկավարները սանձարձակորեն բռնադատում էին մարզի հայության մարդկային տարրական իրավունքները, բիրտ ճնշումներ էին կիրառում հայ դպրոցի ու մշակույթի նկատմամբ: Միաժամանակ, փորձված եւ խորամանկ միջոցներով, դիվանագիտորեն վարում էին մարզը հայաթափելու, այն թուրքացնելու հետեւողական քաղաքականություն, որի պատճառով բնակչության ընդհանուր թվաքանակում արագորեն իջնում էր հայության բաժինը: Այդ ամենը չէր կարող առաջ չբերել ժողովրդի, մտավորականության, նույնիսկ կուսակցական աշխատողների եւ պետական ծառայողների մեծ մասի բացահայտ դժգոհությունը: Ինչ խոսք, կային նաեւ Բաքվի հլու կամակատարներ, որոնք ոչ միայն չէին միանում ընդհանուր դժգոհությանը, այլեւ դատապարտում էին հայրենակիցների ազնիվ պոռթկումները: Եթե 1920-1950-ական թվականներին Արցախյան ընդվզումներն առանձին անհատների դժգոհության

էջ 4

Էդիկ Մինասյան
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի դեկան

Արցախյան ազատագրական շարժումը, սկիզբ...

ԱՐՑԱԽԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Արցախյան ազատագրական շարժումը. սկիզբ

էջ 2

արտահայտությունն էին, ապա 1960-1970-ական թվականների պայքարն արդեն թեւակոխել էր նոր հանգրվան՝ զանգվածային ընդվզումների շրջանը: Արցախահայության հետագա պայքարի շահերը հրամայաբար պահանջում էին հրապարակ բերել վստահելի ու աննկուն ղեկավարի, գաղափարական առաջնորդի, որի նկատմամբ հավատ տածեին բոլորը, եւ որն ունակ լիներ կազմակերպելու ժողովրդի դիմադրական ուժն ընդդեմ ադրբեջանական տմարդի եւ ագրեսիվ իշխանությունների: Այդ դժվարին ու վտանգավոր դերակատարությունը վիճակված էր նշանավոր գրող, պատմաբան ու հրապարակախոս, Արցախի գրողների միության ղեկավար Բագրատ Ուլուբաբյանին: Նա իր նորագույն ազատագրական պայքարի համախոհների հետ կազմակերպում էր գաղտնի ժողովներ, համախմբում մարզի մտավորականությանը, Մոսկվա՝ բարձրագույն ատյաններին էր ուղարկում բողոքագրեր:

Բ.Ուլուբաբյանի կազմած եւ մեծ աղմուկ հանած նամակի տակ հեղինակի անվան կողքին իրենց ստորագրություններ էին դրել նաեւ մարզի ուրիշ 12 գործիչներ՝ Ստեփանակերտի քաղխորհրդի գործկոմի նախագահ Սերգեյ Շաքարյանը, «Խորհրդային Ղարաբաղ» մարզային թերթի խմբագիր Լազր Գասպարյանը, մարզային ռադիոհաղորդումների խմբագիր Գրիգոր Ստեփանյանը, Ստեփանակերտի N 2 պետտնտեսության տնօրեն Արամ Բաբայանը, Սոսի Ս.Շահումյանի անվան կոլտնտեսության նախագահ Արսեն Մուքանյանը, մշակույթի մարզային վարչության պետ Գուրգեն Գաբրիելյանը, բանաստեղծ Բոգդան Ջանյանը, Հանրապետության ժողովրդական դերասան Միքայել Կորգանյանը, Ստեփանակերտի N 59 շինվարչության պետ Արկադի Մանուչարյանը, Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանի տնօրեն Ալբերտ Սեյրանյանը, Ստեփանակերտի ռադիոհաղորդումների ավագ խմբագիր Մաքսիմ Ավանեսյանը եւ N 59 շինվարչության գլխավոր ինժեներ Սերգեյ Գրիգորյանը: (Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախը (1917-2000), գիրք Բ, Երևան, 2005, էջ 216):

Նամակի հեղինակները շեշտել էին, որ ԼՂ բնակչության 85%-ը հայեր են, որոնք այդտեղ ապրում են անհիշելի ժամանակներից եւ հույս էին հայտնել, որ ԽՄԿԿ Կենտկոմն ու խորհրդային կառավարությունը կաջակցեն մարզի միավորմանը Հայկական ԽՍՀ-ի հետ:

1965թ. Հունիսին «13-ի նամակը» ուղարկվեց Մոսկվա՝ կուսակցական եւ պետական ղեկավար մարմիններին: Այն երկրի ղեկավարությանն անձամբ հանձնեց Բ.Ուլուբաբյանը: Նրան ընդունել եւ զրույցներ էին ունեցել ԽՄԿԿ Կենտկոմում:

Ադրբեջանում կատաղի թշնամանքով ընդունեցին Արցախից Մոսկվա ուղարկված դիմումներն ու բողոքները, դրանց հեղինակները մեղադրվեցին ահաբեկչական գործունեություն ծավալելու մեջ: Բաքվից հետեւեցին աննախադեպ սպառնալիքներ, բայց հայրենասերները չընկրկեցին: Բ.Ուլուբաբյանը կազմում եւ ԽՄԿԿ Կենտկոմ է ուղարկում մի նոր բողոքագիր, որի տակ նրանից բացի ստորագրել էին եւս երեք մարդ:

1966թ. Երեւանում հայտնվեց 150 էջանոց անստորագիր մի մեքենագիր տեքստ, որի հեղինակը դարձյալ Բ.Ուլուբաբյանն էր: Այն բազմացվեց եւ տարածվեց: Տեքստում խոսք էր գնում Ադրբեջանի տիրապետության տակ հեծող հայության դժվարին կյանքի մասին: Շուտով դրան հաջորդեցին դաժան հալածանքներ Արցախում: Տասնյակ մարդիկ բանտ նետվեցին, որտեղ մի քանիսը մեռան՝ չդիմանալով կտտանքներին, ծեծ ու ջարդին: Մարզի մի խումբ մտավորականներ ենթարկվեցին անողոք հետապնդումների եւ արտաքսվեցին հայրենի երկրամասից: Մյուս կողմից Արցախի մի քանի ստրկամիտ պաշտոնյաներ (Կեւորկով, Մելքումով եւ նրանց աջակիցները) ամեն կերպ հաճոյանում եւ հլու-հնազանդ ծառայում էին Բաքվի իշխանություններին՝ հավատարմությամբ կատարելով նրանց հակահայ հրահանգները եւ կարգադրությունները:

Պետական մակարդակով Արցախում սկսված դաժան տեռորը զայրույթի ուժգին ալիք առաջ բերեց Հայաստանում: Պատահական չէ, որ 1966թ. օգոստոսին ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Ա.Քոչինյանի ստորագրությամբ բողոքի նամակ ուղարկվեց ԽՄԿԿ Կենտկոմ, որով պաշտպանվում էր Արցախը Հայաստանին միավորելու պահանջը:

Հետագա տարիներին Հայաստանից ու Արցախից շարունակվում էր նամակ-բողոքների հոսքը Մոսկվա: Երեւանից հայ գրողների ու գիտնականների մի խումբ երկրի ղեկավարությունից պահանջեց՝ վերջապես ուշադրություն դարձնել արցախահայության վիճակի վրա եւ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել: Հայաստանում, Արցախում եւ Սփյուռքում մեծ արձագանք գտավ խորհրդային ղեկավարությանն ուղղված մեծանուն գրող, սոցիալիստական աշխատանքի հերոս Սերո Խանզադյանի նամակ-բողոքը, որով նա իր զայրույթն էր արտահայտել այն անտարբերության հանդեպ, որ կենտրոնը ցուցաբերում էր ամբողջ հայ ժողովրդին հուզող խնդրի, նրա արդարացի պահանջի նկատմամբ:

Հիշատակության են արժանի մոսկվաբնակ արցախցի նշանավոր գիտնական Հրանտ Եպիսկոպոսյանի, Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի դասախոս Սուրեն Բաղդասարյանի եւ այլոց բողոքներն ու կազմած տեղեկագրերը, որ նրանք ուղարկում էին կուսակցական եւ խորհրդային վերադաս մարմիններին՝ չստանալով որեւէ հիմնավորված պատասխան:

Արցախյան ազատագրական ոգորումները նոր թափ ստացան 1970-ական թվականների վերջերին եւ 80-ական թվականների սկզբին: Այդ շրջանում աչքի ընկան պայքարի մի ամբողջ շարք նոր գործիչներ: Նրանց թվում էր գրող ու հրապարակախոս Զորի Բալայանը, որն իր գրքերով ու հոդվածներով, հրապարակախոսական ելույթներով, ստորագրահավաքներ կազմակերպելով, Մոսկվայի մամուլի օրգաններում տպագրած ակնարկներով մեծապես նպաստում էր արցախահայության պայքարի վերելքին: Ռուս մտավորականության մի շարք լավագույն ներկայացուցիչների հետ նա հաստատել էր սերտ հարաբերություններ եւ նրանց ներգրավել արցախյան շարժման պաշտպանության գործին:

1986թ. փետրվարին տեղի ունեցած ԽՄԿԿ 27-րդ համագումարի նախօրյակին Մ.Գորբաչովին եւ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Ա.Գրոմիկոյին Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ ներկայացվել էր նամակ՝ հայ հինգ ակադեմիկոսների, երեք գեներալների եւ ԽՍՀՄ երեք ժողովրդական արտիստների ստորագրությամբ: Նրանց թվում էր Աբել Աղանբեգյանը, ով այդ ժամանակ Մ.Գորբաչովի խորհրդականն էր: Բայց Մոսկվան շարունակում էր լուռ մնալ, իսկ շարժումը գնալով արմատական բնույթ էր ստանում: (Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքար, Երեւան, 1994, էջ 292):

1986թ. հուլիսին Արկադի Կարապետյանի ղեկավարությամբ Ստեփանակերտում հիմնվեց ընդհատակյա մի կազմակերպություն, որը ստացավ Արցախյան միություն անունը: 1987թ. ամռանն ու աշնանը «Միությունը» կատարեց իր ծրագրի նվազագույն մասը՝ անցկացրեց ԼՂԻՄ-ը Հայաստանի հետ միավորելու ոչ պաշտոնական հանրաքվե, որի արդյունքում հավաքվեց ավելի քան 80 հազար ստորագրություն: Նույն թվականի նոյեմբերի վերջին Մոսկվա մեկնեց մի պատվիրակություն, որը ԽՄԿԿ Կենտկոմ ներկայացրեց հավաքված ստորագրությունների փաթեթը: Դարձյալ ոչ մի արձագանք: («Հայոց աշխարհ», 22.01.1998):

Բայց արցախահայության պայքարի թափը չէր պակասում: Որոշվեց ԼՂԻՄ-ից նոր պատվիրակություն ուղարկել երկրի մայրաքաղաք: Պատվիրակությունը Երեւանից մեկնեց 1988թ. հունվարի 5-ին՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր Վազգեն Բալայանի գլխավորությամբ: Պատվիրակները Մոսկվա տարան Լեռնային Ղարաբաղի բոլոր մակարդակների պատգամավորների եւ ղեկավար աշխատողների 260 ստորագրությամբ հանրագիր եւ մարզի ստեղծման ու Ադրբեջանի կազմում նրա բացարձակ մեծամասնությունը կազմող հայ բնակչության անտանելի վիճակի վերաբերյալ 80-ից ավելի փաստաթուղթ: (Ուլուբաբյան Բ., նշված աշխ., էջ 293): Մոսկվայում պատվիրակության գործունեությանն աջակցում էին Զորի Բալայանը եւ Իգոր Մուրադյանը: Հունվարի 8-ին պատվիրակությանն ընդունում է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի առաջին տեղակալ, ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի անդամ Պ. Դեմիչեւը, որին էլ հանձնվում են տարած փաստաթղթերն ու հանրագիրը: Նա հուսադրում է պատվիրակության անդամների՝ ասելով, որ անպայման կստեղծվի ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հատուկ հանձնախումբ՝ հարցը հանգամանորեն ուսումնասիրելու համար: Նաեւ հավաստիացումներ եղան, որ պատվիրակության անդամները չեն ենթարկվի հետապնդումների ու հալածանքների: Ամբողջ Արցախն անհամբեր բաղձալի լուրի էր սպասում Մոսկվայից, բայց Կրեմլը շարունակում էր լռել: Արցախցիները ստիպված Մոսկվա ուղարկեցին նոր պատվիրակություն՝ Վաչե Սարուխանյանի եւ մի քանի այլ գործիչների մասնակցությամբ: Պատվիրակությունն ընդունվեց ԽՄԿԿ Կենտկոմի ազգային հարաբերությունների սեկտորի վարիչ Վ. Միխալկովի կողմից, որը նույնպես հուսադրող, բայց դատարկ խոստումներ տվեց: («ԼՂ Հանրապետություն», 22.01.1988):

Ոգեւորված Գորբաչովյան վերակառուցման քաղաքականությունից եւ հավատալով Մոսկվայի խոստումներին՝ արցախցիները 1988թ. սկզբներից դուրս եկան բացահայտ պայքարի՝ «Լենին-կուսակցություն-Գորբաչով» լոզուգներով: Սկզբում շարժումը, ըստ էության, չէր ղեկավարվում որեւէ կազմակերպության կամ ընտրված որեւէ պատասխանատու անձի կողմից: Այն ընթանում էր տարերային հուժկու պոռթկումներով: Արցախահայությունը վերջնականապես համոզվել էր, որ ազատությունը կարող է ձեռք բերվել ոչ թե վերադասին ուղղված խնդրանք-պաղատանքներով, այլ միայն ու միայն հետագա անձնուրաց պայքարով ընդդեմ ադրբեջանական դաժան գաղութատիրության: Ստեղծված ծայրահեղ լարված իրավիճակում արցախահայությունը կամ պետք է հեռանար հայրենի երկրամասից, կամ պայքարեր իր հողն ու պատիվը պաշտպանելու համար: Արցախցին ընտրեց երկրորդ ուղին:

Ոտքի ելած մարզի բովանդակ հայության ազատագրական շարժումն աստիճանաբար առաջ քաշեց մի ոչ պաշտոնական կոլեկտիվ ղեկավարություն, որի մեջ էին Արկադի Մանուչարյանը, Համլետ Գրիգորյանը, Վարդան Հակոբյանը, Ռոբերտ Քոչարյանը, Գուրգեն Գաբրիելյանը, Հրաչյա Բեգլարյանը, Մաքսիմ Միրզոյանը, Վասիլի Աթաջանյանը, Մուրադ Պետրոսյանը, Ռոլես Աղաջանյանը, Արկադի Կարապետյանը, Բորիս Առուշանյանը եւ ուրիշներ: (Արշակյան Ա., Արցախյան գոյապայքար (1985-1992), Երեւան, 2004, էջ 18): Նրանց կոչերով մարզի բոլոր ձեռնարկություններում, կոլտնտեսություններում, ուսումնական հաստատություններում եւ մշակույթի օջախներում տեղի էին ունենում ժողովներ, կոմերիտական եւ կուսակցական կազմակերպությունների նիստեր, գյուղական, ավանային, քաղաքային եւ շրջանային խորհուրդների նստաշրջաններ, որտեղ քննարկվում էին Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու հարցը: Ընդունված որոշումներն ու առաջարկություններն արժանացան Ստեփանակերտի կուսքաղկոմի եւ Մարտակերտի, Ասկերանի, Մարտունու ու Հադրութի կուսշրջկոմների հավանությանը: Մոսկվան ու Բաքուն օր-օրի ուժեղացնում էին շարժման դեմ ճնշումը: Փետրվարի 15-ին ԼՂԻՄ Կուսմարզկոմի առաջին քարտուղար Բորիս Կևորկովը, հանդիպելով շարժման ակտիվիստներին, ընթերցում է Մոսկվայից ստացված փաստաթուղթ, որտեղ «Ղարաբաղյան շարժման առաջնորդները ճանաչվում են որպես էքստրեմիստներ եւ խստագույնս պիտի պատժվեն»: Շարժումը գլխատելու համար կազմվում է էքստրեմիստների» ցուցակ, որի մեջ մտցվում են 27 հոգու անուն, որոնց նկատմամբ նախատեսվում էր կիրառել տարբեր բնույթի պատիժներ: (Нагорный Карабах и вокруг него, Глазами независимых наблюдателей, Ереван, 1991, с. 77, «Եղիցի լույս», N5, 2000): 1988թ. փետրվարի 16-ից սկսած՝ ցուցարարներից շատերը օր ու գիշեր գտնվում էին Ստեփանակերտի քաղաքային հրապարակում՝ մնալով վրանների տակ եւ վառելով խարույկներ: Գյուղերից ցուցարարների համար բերում էին փայտ, հաց, սննդամթերք: Քանի որ շարժումն ընթանում էր տարերայնորեն, եւ չկար ընդհանուր ղեկավարություն, ուստի հրամայական պահանջ դարձավ ունենալ ղեկավար մարմին: Ստեղծվեց նախաձեռնող խումբ Արկադի Մանուչարյանի ղեկավարությամբ: Նախաձեռնող խմբի շտաբը դարձավ «Խորհրդային Ղարաբաղ» թերթի խմբագրությունը: Շուտով նախաձեռնողների փոխարինեց մարտի 2-ին ստեղծված 11 հոգուց բաղկացած խորհուրդը կամ կոմիտեն՝ «Կռունկ» անունով: Խորհրդի նախագահ ընտրվեց Արկադի Մանուչարյանը, տեղակալ՝ Վարդան Հակոբյանը: Հենց առաջին նիստում ստեղծվեցին 10 հանձնաժողովներ, որոնցում ընդգրկվեցին մոտ 50 հոգի: Կոմիտեի քաղաքական գծով հանձնաժողովի կազմի մեջ ընդգրկվեցին Ռոբերտ Քոչարյանը (նախագահ), Սերժ Սարգսյանը եւ ուրիշներ»: (Արշակյան Ա., նշված աշխ., էջ 21): «Կռունկ» կոմիտեն մեծ աշխատանք կատարեց շարժումը կազմակերպված հունով տանելու եւ բնակչության անվտանգությունն ապահովելու ուղղությամբՈրոշվեց իրավական բոլոր նորմերը պահպանելով՝ պաշտոնապես բարձրացնել Արցախի ժողովրդի համար բախտորոշ հարցը եւ այդ նպատակով գումարել մարզխորհրդի արտահերթ նստաշրջան: Հրավեր ստացան բոլոր, այդ թվում ադրբեջանցի պատգամավորները:

Բաքվի իշխանություններն ամեն ջանք գործադրեցին, բայց չկարողացան ձախողել նստաշրջանի հրավիրումը:

Ադրբեջանական իշխանությունների կողմից հարուցված մեծ դժվարությունները հաղթահարելով 1988թ. փետրվարի 20-ին հրավիրվեց ԼՂԻՄ ժողովրդական

ՊՈԵԶԻԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ

Արցախյան շարժումը հայ ժողովրդի ազատագրական պայքարի հերոսական եւ բախտորոշ էջերից է: Այն Ավարայրի եւ Սարդարապատի շարունակությունն է: 1988-ի փետրվարից պատմական Հայաստանի 10-րդ նահանգը՝ Արցախ աշխարհը, ոտքի ելավ պահանջատիրոջ իրավունքով եւ խորհրդային իշխանության բարձրագույն ատյաններին ներկայացրեց մայր Հայաստանին վերամիավորվելու իր արդարացի վճիռը: Աշխարհասփյուռ հայությունը խորապես գիտակցեց պահի կարեւորությունը եւ սատարեց արցախցիների արդար պահանջին:

Երկրագնդի չորս ծագերում ամեն մի հայ սպասում էր, որ խորհրդային իշխանությունները կցուցաբերեն ողջախոհություն եւ խաղաղ ճանապարհով կլուծեն հարցը: Սակայն տեղի ունեցավ անսպասելին: ԽՄԿԿ Կենտկոմի վայ առաջնորդների թողտվությամբ, ՊԱԿ-ի անմիջական ղեկավարությամբ Ադրբեջանի ղեկավար շրջանները կազմակերպեցին հայ ազգաբնակչության ցեղասպանություն հայի ձեռքով կերտված Սումգայիթում, Բաքվում, Գանձակում, Մինգեչաուրում եւ հայաշատ այլ բնակավայրերում: Արցախը շրջափակման մեջ առնվեց: Հայ ժողովուրդն զգաց, որ իրեն պարտադրված պատերազմը վերջին բախտորոշ կռիվն է, ուստի այդ վճռական պայքարին պետք է իր մասնակցությունը բերի ֆիզիկական ու բարոյական ուժերի համախմբվածությամբ ու հավատով:

Արցախահայությունն իր թիկունքին զգալով հարազատ եղբայրների եւ քույրերի ուժն ու նվիրվածությունը՝ պարզեց նորօրյա Թուր-Կայծակին ու նետվեց մարտի: Կամքը մեկն էր՝ մարտնչել, վճիռը մեկ՝ հաղթանակել հանուն իր ավանդական օջախի պահպանման, իր անկախության եւ ազատության նվաճման:

Արցախյան պատերազմին զինվորագրվեց նաեւ հայ գրականությունը, առաջին հերթին պոեզիան՝ որպես օրերի անմիջական արձագանք:

Սոկրատ ԽԱՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ

Չնայած պատերազմական դժվարին պայմաններին եւ գիրք տպագրելու սուղ հնարավորություններին, Արցախում ապրող եւ ստեղծագործող բանաստեղծներն ընթերցողի սեղանին դրեցին ուշադրության արժանի ժողովածուներ: Այդ են վկայում Վ.Հակոբյանի «Արցախա ծուխ», «Ամարասի զանգերը», «Տաճարն Աստծո», «Սոսե» ժողովածուները, Գ.Գաբրիելյանի մարտական երգերի շարքը, «Մեր Գագուլյան», «Անդրանիկ», «Մուսա լեռան… երկու որդին», «Ողջակիզված կյանք» վավերագրական պոեմները, Հ.Բեգլարյանի «Հրաշք երկիր իմ Ղարաբաղ», «Արցախն Ավարայր», Ն.Ավագյանի «Հասուն իմ հասկ», Ա.Հովհաննիսյանի «Ավանդատուն», Ս.Խանյանի «Արցախյան ղողանջներ», «Արցախի արծիվը», Ռ.Եսայանի «Նժար», Ա.Թովմասյանի «Արցախցի եմ ես», Ն.Գասպարյանի «Հավատ Արցախի», Հ.Ալեքսանյանի «Կենսադաշտ» գրքերը, Դ. Միքայելյանի քնարական երգերի շարքը:

Շարժման առաջին հանրահավաքներում ու շքերթներին, որպես ոգեշնչումի կոչ, հնչել է Հ. Շիրազի՝ տարիներ առաջ գրած «Ղարաբաղի ողբը» բանաստեղծությունը: Նրանում մեծ արվեստագետի մարգարեական հեռատեսությունն է խոսում: Հանապազօրյա հոգեւոր հաց էր դարձել այն, ամբողջանալու եւ ազգովի մաքառելու օրհներգ, որի տողերը ծածանվում են դրոշի պես: Այն արտասանում էին ասմունքողներն ու բանվորները, ուսանողներն ու աշակերտները.

Ղարաբաղը մորս կանչն է՝ ինձ է կանչում հույսով տրտում,
Ղարաբաղը իմ կակաչն է, կարմիր, բայց սեւ ունի սրտում,
…Ա՜խ, ե՞րբ պիտի ելնես բանտից՝ Նախիջեւանի ձեռքից բռնած,
Որ ազգովին Մասիս ելնենք, քարավանի նառից բռնած,
Նորից ազգի ավազանում հայ մկրտվես, հա՛յ Ղարաբաղ:

Թեժ օրերի հետ, արագընթաց ձեւավորվեց Ղարաբաղյան շարժման երգը, որ համահունչ էր զենքի շառաչին: Արցախը համարվեց ամբողջ հայության դարավոր երազանքի ջահակիրն ու առաջամարտիկը:

1989թ. հուլիս-օգոստոս ամիսներին Ստեփանակերտում սկսեց տպագրվել արդեն Ադրբեջանի գրողների միությունից անջատված Լեռնային Ղարաբաղի գրողների կազմակերպության «Արցախ» գրական-գեղարվեստական երկամսյա հանդեսը (խմբագիր՝ ԼՂՀ գրողների միության նախագահ Վ.Հակոբյան): Նրա էջերում զետեղված էին պոետների կրակոտ գործերը՝ վճռական պայքարն աննահանջ շարունակելու կոչերով: 1989-ին Երեւանում «Լույս» հրատարակչությունը տպագրեց Վ. Հակոբյանի «Արցախա ծուխ» ժողովածուն, որը գնահատվեց որպես արարելու, մաքառելու, հարատեւելու գեղարվեստական արժանի ընդհանրացում: Կարոտի ու սիրո երգիչը տեսավ 20-րդ դարի ազերական մղձավանջն արցախցիների ազատաբաղձ ոգու դեմ եւ ցասումով խարազանեց թշնամու ցինիզմն ու դաժանությունը: «1988 թիվ, փետրվար» բանաստեղծության մեջ Վ.Հակոբյանը հաստատեց, որ «գայլը գայլն է նույն բնույթով պատիր՝ գառան մորթու մեջ, թե որջում անտես», որ նրա «ատամը արյան համ» է առել կրկին եւ նորից ցցել գայլային իր մռութը: Ուստի անհրաժեշտ է մարտնչել նրա դեմ՝ օրինակ առնելով հայոց պատմության հերոսական դասերից.

Մենք որդիք Հայկի, արդար ու վսեմ,
Ցավ ու դառնություն այդ ե՞րբ չենք տեսել,
Բայց ոչ մի անգամ, Աստված է վկա,
Արցախին հաղթող չի եղել, չկա…

Տաղանդավոր բանաստեղծների մասին ընդունված է ասել, որ ժողովրդի համար ստեղծված ամենատագնապալի պահերին նրանց գրիչն ավելի բեղմնավոր է դառնում: Հիրավի, այդպես է: Ստեղծագործական խառնվածքի նույն առանձնահատկությունն ի վերուստ տրված է նաեւ Վ. Հակոբյանին:

Ոչ միայն գրական արցախյան օջախում, այլեւ հայ պոեզիայի արդի

էջ 8

պատգամավորների մարզխորհրդի արտահերթ նստաշրջան: Մարզխորհրդի արտահերթ նստաշրջանը սկսվեց երեկոյան ժամը 20 անց 20 րոպեին, եւ հայտնի դարձավ, որ մարզխորհրդի 149 պատգամավորներից ներկայացել էին 110-ը: Մարզխորհրդի արտահերթ նստաշրջանին հրաժարվեցին մասնակցել ադրբեջանցի պատգամավորները: (Տե՛ս նույն տեղում, էջ 21): Հենվելով իր սահմանադրական իրավունքի վրա՝ մարզային խորհուրդն ընդունեց պատմական որոշում, որի արձանագրային մասում ասված էր. **«Եկել է վերակառուցման ու ժողովրդավարության ժամանակը: Մեր երկիրը լծվել է ստալինյան դաժան պատմաշրջանում կատարված հակաժողովրդական ամեն տեսակ սխալների ու զանցառությունների վերացմանը: Վաղուց ժամանակն է, որ մարզի հայության ճակատագրի վրա դրված խարանը եւս ջնջվի, եւ մենք՝ Լեռնային Ղարաբաղի հայերս, ձեռք բերենք մեր երկրամասը տնտեսապես զարգացնելու, մեր ազգային-մշակութային նվաճումներին լիիրավ տեր դառնալու հնարավորություններ»:** (Арутюнян В.Б., События в Нагорном Карабахе, Ереван, с. 37): Նստաշրջանի բոլոր մասնակիցները, Լեռնային Արցախի բոլոր հայ բնակչությունը խորապես համոզված էին, որ այլեւս բացառվում է Ադրբեջանի կազմում մնալը եւ որ հարցի միակ եւ սահմանադրական լուծումը Խորհրդային Հայաստանի հետ վերամիավորումն է:

Ուստի Մարզխորհրդի նստաշրջանը որոշեց. **«Ընդառաջելով ԼՂԻՄ-ի աշխատավորների ցանկություններին, խնդրել Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին եւ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդին՝ խորին ըմբռնման զգացում դրսեւորել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իղձերի նկատմամբ եւ լուծել ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կազմից ՀԽՍՀ կազմ հանձնելու հարցը, միաժամանակ միջնորդել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առջեւ՝ ԼՂԻՄ-ն Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմ հանձնելու հարցի դրական լուծման համար»:** (Խորհրդային Ղարաբաղ, 21.02.1988): Հաջորդ օրն այս որոշումը տպագրվեց «Սովետական Ղարաբաղ» թերթում:

Ադրբեջանի իշխանությունները սվիններով դիմավորեցին այդ որոշումը եւ բռնեցին արցախահայության բացահայտ մարտահրավերը բռնի ուժով խեղդելու ուղին:

Արցախահայության ազատագրական պայքարին զորավիգ լինելու վճռականությամբ հաջորդ օրը Հայաստանում սկսվեցին հանրահավաքներ:

Փետրվարի 21-ին Երեւանի Թատերական հրապարակում տեղի ունեցավ առաջին զանգվածային հանրահավաքը: Շուտով միտինգների ու ցույցերի ալիքը տարածվեց հանրապետության բոլոր քաղաքներում ու գյուղերում: Բազմամարդ ժողովներում աշխատավորներն իրենց համերաշխությունն էին հայտնում Արցախի ազատագրական շարժմանը, երդվում էին աջակից լինել իրենց եղբայրներին ու քույրերին, միաժամանակ կենտրոնական իշխանություններից պահանջում էին արդարացի լուծել Լեռնային Ղարաբարի հարցը: Աննախադեպ աճում էր հանրահավաքների մասնակիցների թիվը: Փաստորեն ԽՍՀՄ պատմության մեջ առաջին անգամ Լեռնային Ղարաբաղում եւ Հայաստանում տեղի ունեցան հարյուր հազարանոց հանրահավաքներ ու ցույցեր: Երեւանի Թատերական հրապարակում՝ Մատենադարանի առջեւ, գլխավոր պողոտաներում տեղի ունեցող հանրահավաքներում ու ցույցերում ելույթներ էին ունենում գիտության ու արվեստի նշանավոր գործիչներ, բանվորներ, ծառայողներ, պատերազմի ու աշխատանքի վետերաններ: Դրանց թվում էին ՀԽՍՀ ԳԱ նախագահ, աշխարհահռչակ աստղագետ, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը, ճանաչված արձակագիր Սերո Խանզադյանը, ժողովրդական դերասան Սոս Սարգսյանը, սիրված երաժիշտ Հովհաննես Չեքիջյանը, բանաստեղծ Ռազմիկ Դավոյանը եւ շատ ուրիշներ: Հայաստանում բնակվող ռուսները, եզդիները, ասորիները, ուկրաինացիները, քրդերը եւ տարբեր ազգերի մարդիկ սատար կանգնեցին արցախցիների արդար պահանջին, իրենց համայնքների, միությունների անունից պաշտպանեցին արցախահայության օրինական պահանջը, հրապարակեցին դիմումներ ու կոչեր:

ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունները, չնայած իրենց կողմից վերակառուցման ու հրապարակայնության հռչակմանը, արցախյան արդարացի շարժման հանդեպ դրսեւորեցին կատաղի անհանդուրժողականություն: Երկրի բարձրագույն ղեկավարությունն ա-ներկբա կանգնեց ադրբեջանական գաղութարարների կողքին: Ազգերի ինքնորոշման սահմանադրական իրավունքի իրագործումը կարող էր լուրջ վտանգ սպառնալ կոմունիստական համապարփակ տիրապետությանը: Պատահական չէ, որ Ադրբեջանի ղեկավարության առաջարկությամբ փետրվարի 21-ին ԽՄԿԿ ԿԿ քաղբյուրոն հապշտապ ընդունեց «Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների մասին» որոշումը, որով արցախահայության ազատագրական շարժումը որակվեց որպես «ծայրահեղական», մի խումբ անջատողականների գործողությունների արդյունք: (Правда¦, 22.02.1988.): Հարցն ըստ էության լուծելու փոխարեն կենտրոնական իշխանությունները փորձում էին պայքարը դադարեցնել հայ անվանի մտավորականների միջոցով:

Փետրվարի 25-ին ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովը հանդիպեց Զ. Բալայանի եւ Ս. Կապուտիկյանի հետ: Նա կեղծ խոստումներով փորձեց հանգստացնել ալեկոծ հայ ժողովրդին, հետո սպառնաց, որ եթե շարժումը շարունակվի, ապա դա կործանարար կլինի Ադրբեջանում ապրող շուրջ կես միլիոն հայերի համար: (Ուլուբաբյան Բ., նշված աշխ., էջ 72): Դրանով նա փաստորեն հուշեց ադրբեջանցի վանդալներին անել այն, ինչ արեցին հետագայում: Գորբաչովը նաեւ ադրբեջանցիներին հասկացնել տվեց, որ կարող են փակել Հայաստան տանող ճանապարհները, հանրապետությունը կտրել արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելուց եւ տնտեսական բոյկոտի միջոցով բնակչությանը սովի մատնել: ԽՍՀՄ կենտրոնական մարմինները շարժման առջեւ պատնեշ կանգնեցրին նրա սկսման առաջին օրերից եւ մինչեւ վերջ հավատարիմ մնացին արցախյան հարցի նկատմամբ որդեգրած անհանդուրժողական կարծատես քաղաքականությանը:

Արցախյան շարժման հենց սկզբից լիովին բացահայտվեց Խորհրդային Հայաստանի իշխանությունների կտրվածությունը ժողովրդական զանգվածներից, նրանց զգուշավորությունն ու անկարողությունը: Հանրապետության ղեկավարության ոչ մի օղակ չկարողացավ ազդեցություն գործել ծավալվող իրադարձությունների վրա: Հայաստանի կոմկուսի ղեկավարությունը ոչ միայն չկարողացավ ուղղորդել զանգվածային շարժումը, այլեւ արգելափակեց ծավալվող իրադարձությունների ճիշտ լուսաբանումը: Տարիներ շարունակ իրեն հեռու պահելով արցախյան հիմնահարցերից եւ անտեսելով այդ մասին ստացված ահազանգերը՝ հանրապետության կուսակցական, պետական բյուրոկրատիան արցախյան շարժման նկատմամբ դրսեւորեց ծայրահեղ զգուշավորություն եւ վախկոտություն: Դա թելադրված էր Արցախի մասին վերադաս մարմինների պաշտոնական դիրքորոշումն ամեն գնով պահպանելու ձգտմամբ: Փետրվարի 21-ին շտապ հրավիրված ՀԿԿ կենտկոմի բյուրոյի նիստը հավանություն տվեց ԽՄԿԿ կենտկոմի որոշմանը, որովհետեւ Հայաստանի մի շարք իշխանավորներ ձգտում էին հարաբերությունները չբարդացնել վերադասի հետ: (Հայաստանի ազգային արխիվ (այսուհետեւ ՀԱԱ), Ֆ.1, ց. 82, գ. 21, թ.2-3): Հաջորդ օրը տեղի ունեցավ ՀԿԿ կենտկոմի բյուրոյի հերթական նիստը, որը նպատակահարմար գտավ խնդրել ԽՄԿԿ կենտկոմին ապագայում ազգային հարցը քննարկելիս չմոռանալ Լեռնային Ղարաբաղի հարցը: (Տե՛ս նույն տեղում, թ. 13): Հանրապետության ղեկավարությունը չկարողացավ որեւէ կերպ ազդել իրադարձությունների ընթացքի վրա: Եվ ժողովրդի ազգային ցավերի նկատմամբ անտարբերությունը Հայաստանի իշխանություններին, ի վերջո, հասցրեց ինքնամեկուսացման:

Արցախյան հարցի հետ մեկտեղ հանրահավաքներում բացահայտվում եւ քննարկվում էին հանրապետության սոցիալ-տնտեսական ու հասարակական- քաղաքական կյանքում տեղ գտած թերություններն ու սխալները, որոնց մասին իշխանությունները լռում էին: Փաստորեն ժողովուրդն իր ձեռքն էր վերցրել շարժումը եւ ինքն էր տոն տալիս հանրապետության հասարակական-քաղաքական կյանքին:

Իսկ շարժումը գնալով ծավալվում էր: 1988թ. փետրվարին ստեղծվեց շարժման կազմկոմիտե, որի մեջ մտան Իգոր Մուրադյանը, Վաչե Սարուխանյանը, Վազգեն Մանուկյանը, Աշոտ Մանուչարյանը, Համբարձում Գալստյանը, Ալեքսան Հակոբյանը, Սամսոն Ղազարյանը, Սամվել Գևորգյանը, Վանո Սիրադեղյանը, Արմեն Հովհաննիսյանը, Հենրիկ Իգիթյանը եւ ուրիշներ: (Ազիզբեկյան Ռ., նշված աշխ., էջ 21): Մարտի սկզբներին Իգոր Մուրադյանի նախաձեռնությամբ ստեղծվեց «Ղարաբաղ» անվանումով կոմիտե, որը ղեկավարում էր բազմահազարանոց ցույցերն ու միտինգները: Բոլոր քաղաքներում եւ հիմնարկ-ձեռնարկություններում ստեղծվեցին «Ղարաբաղ» կոմիտեներ, որոնք քննարկում էին պայքարի հետագա զարգացման, շարժմանն օժանդակելու խնդիրներ:

Վազգեն Մանուկյան. ««Ղարաբաղ» կոմիտեն ղեկավարում էր մի շարժում, որը բերեց միաժամանակ երեք հեղափոխության»

Արցախյան շարժումն արդեն շուրջ երեք տասնամյակի պատմություն ունի: Այն բոլորիս պատմությունն է, որովհետեւ կերտվել է բոլորիս միջոցով ու բոլորիս երազանքի հիման վրա: Բայց այն նաեւ անհատների պատմություն է, մարդիկ, ովքեր գաղափարի հետեւից գնալուց առաջ նախ միս ու արյուն տվեցին երազանքին՝ այն վերածելով գաղափարի: Վերջինս դարձավ շարժում, շարժումը՝ վերստին երազանք, բայց՝ արդեն տեսանելի ու շոշափելի, ի դեմս նախ անկախ Հայաստանի, ապա եւ՝ անկախ Արցախի:

Վազգեն Մանուկյանը դեռ մինչեւ 1988-ն էր նախանշել այն երազանքը, որը դարձավ նրա՝ արցախյան պայքարի, արցախյան պատերազմի ու Հայաստանի երրորդ հանրապետության տարեգրության մեջ իր մնայուն հետքն ու գաղափարական ազդեցությունը թողած քաղաքական ու պետական այրի կյանքի գործը:

Նորօրյա Հայաստանի ինքնատիպ ու խորիզմատիկ, ոչ ստանդարտ, բայց համակարգված մտածողության տեր եւ ոչ միանշանակ ընկալվող գործիչներից մեկն արցախյան շարժման ակունքներին էր մոտեցել քաղաքական գուցեեւ ոչ այնքան հրապարակային գործունեության հարուստ փորձով:

Պատահական չէր շարժման գաղափարական դրոշակի՝ նրա ձեռքում գտնվելը, որովհետեւ նա գործնականում գիտեր ոչ միայն գաղափարի թանկ գինը, այլեւ գաղափարի արարման գործընթացն իր ողջ վտանգավորությամբ ու պատասխանատվությամբ…

Պատահական չէր, որ Վազգեն Մանուկյանին հավատում էին թե նեղ շրջանակում՝ ի դեմս «Ղարաբաղ» կոմիտեի, եւ թե լայն զանգվածները՝ հանձինս Ազատության հրապարակի հանրահավաքների մասնակիցների…

Պատահական չէր «Ղարաբաղ» կոմիտեում նրան հատկացված առանցքային դերը, որն անվերապահորեն ընդունում էին թե կոմիտեում, թե դրանից դուրս…

Պատահական չէր կոմիտեում նրան վստահված կազմակերպչի ու համակարգողի պատասխանատու աշխատանքը, որն իր տրամաբանական ու ծանրակշիռ շարունակությունն ստացավ Հայաստանի երրորդ հանրապետության առաջին իսկ օրերից, երբ նրան վստահվեց առաջին կառավարության ղեկավարի բարդ պաշտոնը …

Պատահական չէր նրա հաջողությունը նաեւ երկրի պաշտպանական ոլորտը ղեկավարելու ժամանակահատվածում, երբ ռազմադաշտում բեկումնային հաղթանակներ արձանագրվեցին…

- 2000-ականների սկզբին լույս տեսած Ձեր ելույթների եւ հոդվածների ժողովածուն վերնագրված է «Հայկական երազանք՝ գոյատեւման փակուղում»: Ի՞նչ նկատի ունեք հայկական երազանք ասելով. 1988-ին, երբ սկսվեց արցախյան շարժումը, ի՞նչ վիճակում էր հայկական երազանքը:

- Նախ եւ առաջ, ձեւակերպենք՝ ինչ է նշանակում հայկական երազանքն ընդհանրապես, որը մեզ ուղեկցել է եթե ոչ հարյուրամյակներ, գոնե տասնամյակներ: Մենք միշտ մտածել ենք, որ համաշխարհային նշանակություն ունեցող ժողովուրդ ենք եւ համաշխարհային քաղաքակրթությանը շատ մեծ արժեքներ ենք տվել: Եվ եթե ունենանք անկախ պետություն, ապա կկարողանանք բարեկեցիկ կյանքով ապրել մեր ազատ ու անկախ երկրում որպես հպարտ քաղաքացիներ, ինչպես նաեւ՝ վերականգնել մեր դիրքը, այսինքն՝ լինել համաշխարհային ազգ ոչ միայն մեր սփռվածության շնորհիվ, այլ նաեւ մեր ներդրումով, մեր ներքին ուժով:

Վաղուց ի վեր, իհարկե, նաեւ երազանք կար, որ մի օր Վանը մերը կլինի, բայց 1988-ին ավելի տեսանելի էր Ղարաբաղի հարցը, որն այն փոքր բեկորն էր, որը մնացել էր ցեղասպանություններից ու կորուստներից հետո: Երազանքը մեծ նպատակներին հասնելն էր, ոչ թե մի քիչ ավելի լավ ապրելը: Կարծում եմ՝ եթե այդ երազանքը չլիներ, չէր լինի այն անձնազոհությունը, որը մեր ժողովուրդը, մեր երիտասարդությունը դրսեւորում էր շարժման ժամանակ, մենք արդյունքի չէինք հասնի, չէինք կարողանա հաղթել նաեւ պատերազմում: Այդ երազանքն էր մեզ առաջնորդում եւ ուղեկցում:

Բայց իշխանության գալուց հետո սկսեց առաջ մղվել մի գաղափար, թե՝ մենք մի սովորական ժողովուրդ ենք, որ մենք պարզապես պետք է կարողանանք մեր կենցաղը կազմակերպել, ապրել եւ այլն: Իմ հիմնական դժգոհությունը Լեւոն Տեր-Պետրոսյանից այս կամ այն նշանակման կամ այս կամ այն օրենքի վերաբերյալ չէր: Հայաստանում ստեղծվեց մի ընդհանուր մթնոլորտ, որը կոտրում էր երազանքը՝ մարդուն զրկելով արարելու ոգեւորությունից: Մենք հիմա տեսնում ենք դրա հետեւանքները, որովհետեւ նույնիսկ արտագաղթի պատճառների մեջ (սոցիալական հարցը, իհարկե, նշանակություն ունի) մեծ նշանակություն ունի այն, որ երազանքը եւ վստահությունն ապագայի նկատմամբ բավականին խարխլվել է: Վերջին ոգեւորության պահը պատերազմի ժամանակ էր, ինչը ես զգում էի, երբ պաշտպանության նախարար էի եւ հիմնվում էի այդ երազանքի վրա, որը բոլորի ուղեղի մեջ կար: Դա էր հնարավորություն

տալիս գնալ առաջ, կառուցել բանակ եւ հասնել ինչ-որ նպատակի:

Մենք հիմա գտնվում ենք մի նոր աշխարհում, որի ամենամեծ բնութագրիչն անորոշությունն է: Աշխարհը մտել է նոր անորոշությունների շրջանակ, որը մեզ համար ստեղծում է նոր հնարավորություններ եւ նաեւ նոր սպառնալիքներ: Այս պայմաններում եթե մենք չկարողանանք համաշխարհային հայկական կառույցներ ստեղծել, եթե չարթնացնենք մեր ժողովրդի ոգին, մենք տանուլ կտանք շատշատ հարցերում: Այսինքն, երազանքի հարցը չի վերացել:

- Կարելի՞ է ասել, որ արցախյան շարժումը հեղափոխություն էր, «Ղարաբաղ» կոմիտեն՝ հեղափոխական կոմիտե, իսկ նրա անդամները՝ հեղափոխականներ:

- Նախ, երկրորդ համաշխարհային պատերազմից հետո շատ պետություններ Ասիայում, Աֆրիկայում եւ այլուր պայքարի արդյունքում անկախություն ձեռք բերեցին: Բոլոր այդպիսի՝ անկախության համար շարժումները, երբ որ դու կախյալ վիճակից հասնում ես անկախ վիճակի, համարվում էին հեղափոխական: Մենք եւս նման վիճակից հասանք անկախության: Հետեւաբար, այդ հեղափոխությունն ասվածը որոշակի առումով կար:

Երկրորդ հեղափոխությունը պետական կառուցվածքում էր. մենք տոտալիտար, ավտորիտար ռեժիմից անցանք ժողովրդավարական ռեժիմի:

Երրորդ՝ մենք տնտեսական մի կացութաձեւը փոխեցինք մյուսի: Կոմունիստական, սոցիալիստական համակարգից անցանք ազատ տնտեսական, շուկայական համակարգի: Ընդորում՝ հանդիպեցինք աննախադեպ խնդրի, երբ ԽՍՀՄ-ի հսկայական պետական սեփականությունը պետք էր դարձնել մասնավոր: Այդտեղ սայթաքեցինք թե մենք, թե ողջ հետխորհրդային տարածքը, եւ ամբողջությամբ չստացվեց այն, ինչ ուզում էինք:

Այսինքն՝ ուզած թե չուզած՝ «Ղարաբաղ» կոմիտեն ղեկավարում էր մի շարժում, որը բերեց միաժամանակ երեք հեղափոխության:

- Ձեր կենսագրության մեջ նշվում է, որ մինչեւ 1988թ. եղել եք տարբեր քաղաքական կազմակերպությունների անդամ եւ կազմակերպիչ: Որքանո՞վ Ձեր այդ փորձը օգտագործվեց «Ղարաբաղ» կոմիտեի ստեղծման ժամանակ:

- Հայաստանում այդպիսի կազմակերպությունների ստեղծումը սկսվեց 1965 թվականից, երբ նշվում էր Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցը: Ես այն ժամանակ երկրորդ թե երրորդ կուրսի ուսանող էի եւ այդ գործընթացների ակտիվ մասնակից: Հայաստանում ստեղծվեցին բազմաթիվ գաղտնի կազմակերպություններ: Երբ տեղափոխվեցի Մոսկվայի համալսարան, այնտեղ գործընկերներիս հետ ստեղծեցինք կազմակերպություն, որը նույնպես, ինչպես մյուսները, հետապնդում էր Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը: Այնուհետեւ վերադարձա Երեւան, որոշ ժամանակ մի գաղտնի կազմակերպությունում աշխատեցի, բայց ԽՍՀՄ-ը այնպիսի երկիր չէր, որ գաղտնի կազմակերպության միջոցով հնարավոր լիներ բան փոխել: Կազմակերպության նպատակներն ու կառուցվածքը կարող էին գաղտնի լինել, բայց ինչ-որ ձեւով այն պետք է օրինական դաշտում լիներ: Օրինակ, ԵՊՀ-ում ստեղծեցինք հայ մշակույթի ակումբ եւ դրա անվան տակ ծավալած գործունեությամբ ձգտում էինք արծարծել անկախության, Ղարաբաղի, ժողովրդավարության եւ այլ հարցեր: Հիշում եմ՝ նույնիսկ մի կազմակերպություն ունեինք, որը փլուզվեց շատ տարօրինակ մի վեճից, թե՝ Հայաստանը երբ անկախանա, սոցիալիստակա՞ն պետք է լինի, թե՞ կապիտալիստական:

Երբ որ Մոսկվայում կազմակերպություն էինք ստեղծել, ես, որ մասնագիտությամբ մաթեմատիկոս եմ, սկսեցի հետաքրքրվել նախ եւ առաջ տնտեսագիտությամբ: Ինձ համար մեծ նշանակություն ուներ նաեւ իշխանությունից հեռացած եւ տարագրված դաշնակցական գործիչների գրքերն ընթերցելը, որոնցում նրանք կարեւոր վերլուծություններ էին անում, նշում իրենց սխալները: Երբ ղարաբաղյան շարժումը սկսվեց, ու ինձ էլ բախտ վիճակվեց բավականին երկար ժամանակ ղեկավարել այն, դրանք ինձ շատ օգնեցին: Մենք աշխատում էինք մեր գործունեությունն այնպես կազմակերպել, որ խուսափենք նույն սխալները կրկնելուց:

Մի խոսքով, այս ամենը որոշակիորեն նախապատրաստությունն էր այն բանի, ինչը հետո տեղի ունեցավ:

Անկեղծ ասած, նույնիսկ երազանքների մեջ դժվար էր պատկերացնել, որ մենք ականատեսը կամ մասնակիցը կլինենք այն բաների, ինչի մասին տեսականորեն խոսում ու քննարկում էինք:

- Ինչպե՞ս ստեղծվեց կոմիտեն, եւ արդյո՞ք ենթադրում էիք, թե ինչպիսի շարունակություն, առավել եւս ավարտ է ունենալու ձեր նախաձեռնությունը:

- Ղարաբաղի ժողովրդի եւ Հայաստանի մտավորականության ու հասարակության մեջ միշտ եղել է վերամիավորման ձգտում: Դեռ հազար ինը հարյուր քառասնական թվականների վերջին-հիսունականների սկզբին Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Հարությունովը նամակ էր գրել Ստալինին, որտեղ ապացուցում էր, որ տնտեսական առումով (այդ ժամանակ ազգային տեսանկյունից հարցը բարձրացնելն իմաստ չուներ) նպատակահարմար է Ղարաբաղը միավորել Հայաստանի հետ: Դրանից հետո բազմաթիվ նամակներ են եղել եւ Ղարաբաղի, եւ Հայաստանի մտավորականության կողմից: Բայց երբ Գորբաչովի ժամանակ որոշակի ազատություններ հռչակվեցին, մի խումբ ստեղծվեց Իգոր Մուրադյանի ղեկավարությամբ, որը կապված էր մտավորականության լայն շրջանակների հետ: Այդ հարցում կարեւոր դեր էր կատարում Ջորի Բալայանը: Իգոր Մուրադյանին խորհուրդ էին տվել կապվել ինձ հետ՝ որպես ազգային շարժումների որոշակի փորձ ունեցողի: Մանավանդ որ առաջացել էին նաեւ ֆինանսական՝ շարժման համար գումարներ հայթայթելու հարցեր: Խոսքը հետեւյալի մասին էր. Խորհրդային Հայաստանում կատարված առաջին ու վերջին հանգանակությունը կատարվեց Վազգեն վեհափառի նախաձեռնությամբ, իսկ պատասխանատվությունը դրված էր ինձ վրա: Այսինքն՝ ես էի զբաղվում հանգանակությամբ, որն առնչվում էր Լիբանանում քաղաքացիական պատերազմին, եւ նպատակը լիբանանահայ մեր հայրենակիցներին օգնելն էր: Պատկերացրեք, թե դա ինչ էր նշանակում ԽՍՀՄ-ում ՊԱԿ-ի պայմաններում: Դժվարություն էր առաջացնում նաեւ այն, որ մարդիկ, ովքեր փող ունեին, չէին ուզում դա ցույց տալ, որովհետեւ այդ փողը օրինական չէր: Սկզբում այսպես կոչված «ցեխավիկները» փող չէին տալիս, վախենում էին: Մի քանի ընկերներով գնացինք Անտոն Քոչինյանենց տուն, ով այդ ժամանակ արդեն թոշակառու էր: Ինքը մեզ ընդունեց, լսեց, կնոջը ասաց՝ սեղան գցի: Նստած զրուցում էինք, զգում էի, որ այդ ամբողջ ընթացքում նա մտածում էր: Չտալ չէր լինի, մեծ գումար տալն էլ վտանգավոր էր՝ ավելորդ խոսակցություններ չառաջացնելու առումով (այդ ժամանակ բոլորը կարծում էին, թե Քոչինյանը շատ հարուստ է: Հետո պարզվեց, որ այդ ամենը խիստ չափազանցված էր): Նա ճիշտ լուծումը գտավ. ասաց՝ թոշակս ստացել եմ՝ երկու հարյուր հիսուն ռուբլի (նա անհատական թոշակառու էր), ամբողջը տալիս եմ ձեզ: Դրանից հետո երբ գնում էինք այդ ցեխավիկների մոտ, ասում էի՝ Քոչինյանն իր աշխատավարձն է տվել: Նրանք էլ սկսեցին իրենց աշխատավարձը տալ:

Մի խոսքով՝ Իգոր Մուրադյանին խորհուրդ էին տվել, որ ես ե՛ւ շարժումների, ե՛ւ ֆինանսական աշխատանքի որոշակի փորձ ունեմ: Մենք դարձանք գործընկերներ, նա մեծ հարգանքով էր վերաբերվում ինձ, ես էլ շատ էի սիրում նրան: Առաջին «Ղարաբաղ» կոմիտեն ստեղծվեց փետրվարյան հանրահավաքներից մեկի ժամանակ: Չնայած արդեն կար գաղտնի մարմին, որը աշխատում էր՝ Իգոր Մուրադյանը, ես, Մանվել Սարգսյանը, մյուսները, բայց հանրահավաքի ժամանակ ժողովրդի քվեարկությամբ մի մարմին ստեղծվեց: Այդ ժամանակ ես նպատակահարմար չհամարեցի դրա մեջ ընդգրկվել: Հետո ստեղծվեց երկրորդը, որի կազմում արդեն ընդգրկվեցի նաեւ ես: Մի խոսքով՝ ինչ-որ կորիզ արդեն ձեւավորվեց:

Արցախյան շարժման 30-ամյակին նվիրված բազմահազարանոց հանրահավաք Ստեփանակերտում

Փետրվարի 13-ին Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը մասնակցել է Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում Արցախյան ազգային-ազատագրական շարժման 30-ամյակին նվիրված բազմահազարանոց հանրահավաքին եւ հանդես եկել ելույթով: Միջոցառմանը ներկա էին Արցախի Հանրապետության երկրորդ նախագահ Արկադի Ղուկասյանը, Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, Արցախյան շարժման վետերաններ, պետական բարձրաստիճան պաշտոնյաներ, Հայաստանի եւ սփյուռքի ներկայացուցիչներ, հյուրեր արտերկրից:

Հետագայում խնդիր առաջացավ Իգոր Մուրադյանի հետ: Նախ. այդ ժամանակ հանդիպումներ էինք ունենում նաեւ հանրապետության ղեկավարների հետ: Մենք համարում էինք, որ խնդիրները վերաբերում են բոլոր հայերին, եւ նրանց աջակցությունը նույնպես անհրաժեշտ էր: Մեզ մոտ տպավորություն ստեղծվեց, որ Իգորը մի քիչ շատ է հանդիպում իշխանական շրջանակների հետ, եւ նրանց ազդեցության տակ ընկնելու հնարավոր վտանգ էինք տեսնում:

Երկրորդ՝ տարաձայնություն կար ինձ հետ: ԽՍՀՄ ղեկավարությունը կուզենար Ղարաբաղի հարցը ներկայացնել այնպես, թե իբր ավանդաբար իրար չսիրող երկու էթնիկական խմբեր իրար հետ կռվում են: Ես համարում էի, որ շարժումը չպետք է դիտարկվի որպես էթնիկական կամ կրոնական խնդիր, չպետք է դառնա մահմեդականի ու քրիստոնյայի պայքար: Պետք էր այնպիսի խնդիր առաջադրել, որը հասկանալի լիներ ամբողջ աշխարհին: Իմ կարծիքով՝ դա ինքնորոշման հարցն էր, սահմանադրական ճանապարհով գնալու հարցը եւ այլն: Այս առումով մենք ունեինք հակասություններ: Իգորը դառնում էր անկառավարելի, եւ մենք նրան հանեցինք «Ղարաբաղ» կոմիտեից:

Իմ կողմից առաջարկություն եղավ կոմիտեում ընդգրկել Դավիթ Վարդանյանին ու Բաբկեն Արարքցյանին: Համբարձում Գալստյանի երաշխավորությամբ ընդգրկվեց նաեւ Լեւոն Տեր-Պետրոսյանը, որին ես մոտիկից չէի ճանաչում: Նրա մասին հարցրեցի Ռաֆայել Իշխանյանին, ով ասաց, որ նա ընդունակ ուսանող է եղել: Հին կորիզից էլ եկան Սամվել Գեւորգյանը, Վանո Սիրադեղյանը, Ռաֆայել Ղազարյանը, ինչպես նաեւ՝ Աշոտ Մանուչարյանը, Ալեքսան Հակոբյանը, Սամսոն Ղազարյանը, եւ ձեւավորվեց տասնմեկ հոգանոց կոմիտեն: Ինձ ընտրեցին կոմիտեի համակարգող: Այդ կազմով էլ հասանք իշխանության: Այնուհետեւ ինչ-որ ժամանակ եւս գոյություն ունենալուց հետո «Ղարաբաղ» կոմիտեն տրոհվեց:

Սկզբնական շրջանում օրակարգում միայն Ղարաբաղի հարցն էր: Ինչ-որ մի ժամանակ հետո կոմիտեից մի քանիսս եկանք այն եզրակացության, որ որպեսզի համահունչ լինենք այն գործընթացներին, որոնք տեղի էին ունենում ոչ միայն ԽՍՀՄ-ում, այլեւ նրա սահմաններից դուրս, որպեսզի հասկանալի լինեն մեր խնդիրները, մենք պետք է ընդլայնենք մեր հարցերի շրջանակը, պետք է լինեն որոշակի գաղափարական սկզբունքներ, որոնց մեջ ընդգրկված լինեն մեր ժողովրդին հուզող եւ առաջնորդող գաղափարներ: Երեք հոգի այս միտքն էին զարգացնում՝ Դավիթ Վարդանյանը, Աշոտ Մանուչարյանը ու ես: Մյուսները այդքան էլ համաձայն չէին, բայց ինչ-որ պահից հետո կոմիտեի կողմից ինձ հանձնարարվեց գրել այդ գաղափարական սկզբունքները: Հանրահավաքներից մեկի ժամանակ ելույթ ունեցա եւ ներկայացրեցի դրանք, որոնք դարձան հայոց համազգային շարժման գաղափարական սկզբունքները: Դրանցում ոչ միայն Ղարաբաղի հարցն էր, այլեւ նաեւ ընդհանրապես ժողովրդավարությանն ու անկախությանը վերաբերող հարցեր: Անկախություն բառը գրված չէր, սակայն խորամանկորեն այդ սկզբունքների մեջ ընդգրկել էինք ԱՄՆ անկախության դեկլարացիայից այն հատվածը, որ եթե իշխանությունները չեն համապատասխանում ժողովրդի կարիքներին ու ցանկություններին, ապա ժողովուրդն իրավունք ունի վերացնել այդպիսի իշխանությունը եւ այլն:

Փաստորեն, շարժումը ստացավ միս ու արյուն եւ միանգամից շատ կարեւոր դարձավ՝ համահունչ լինելով մեր ժողովրդի իղձերին ու ցանկություններին, ինչպես նաեւ համաշխարհային միտումներին: Ղարաբաղյան շարժման հարցում Արեւմուտքը մեր դաշնակիցն էր, ինչպես այն շարժումները, որոնք առաջացան Խորհրդային Միությունում: Բայց մենք դարձանք առաջամարտիկը:

- Դուք ծնվել եք փետրվար ամսին: Զուգադիպությո՞ն է, որ արցախյան շարժման սկիզբը եւս փետրվար ամսին էր:

- Կարծում եմ՝ պատահական էր: Մեր պատմության մեջ մի երկու ամիս կա, երբ վճռական բաները կատարվում են՝ մայիսը եւ փետրվարը:

- Լյուդովիկոս 14-րդն ասում էր, թե՝ «Պետությունը ես եմ»: Արդյո՞ք «Ղարաբաղ» կոմիտեում կար մարդ, ով ասում կամ մտածում էր, թե կոմիտեն ինքն է:

- Մեզնից ոչ մեկն այդպիսի բան չի ասել:

- Ձեր հիշյալ գրքում զետեղված՝ 1988թ. հունիսին Ազատության հրապարակում հնչած ելույթը վերնագրված է «ՄԵՆՔ ԸՆՏՐԵՑԻՆՔ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՈՒՂԻՆ»: Այլ տարբերակ չէի՞ք տեսնում, թե՞ մյուս բոլորը կործանարար էին:

- Իսկապես, բոլոր մնացած ճանապարհները կործանարար էին: Շարժման վերածումը էթնիկական կամ կրոնական հարցի, կամ միայն պատմության վրա հենվելն աղետալի սխալ կարող էին լինել հայերիս համար: Միակ ճանապարհը սահմանադրականն էր, որը քեզ հասկանալի եւ ընդունելի էր դարձնում ամբողջ աշխարհի համար:

- Երբ հայտարարեցիք «գնացքից թռչելու ժամանակի» մասին, դա նույնպե՞ս սահմանադրական ուղի էր ենթադրում:

- Այդ վերնագրով հոդվածում գրվածն ամբողջը սահմանադրական էր: Եթե դու կարող ես խնդիրը լուծել օրինական, միջազգային օրենսդրությանը համապատասխան ճանապարհով, ինչո՞ւ գնալ այլ ճանապարհով: Արցախյան պատերազմին նախորդած՝ հայերի ջարդերի, կոտորածների ու տեղահանումների շրջանում երիտասարդներ կային, ովքեր ասում էին, որ սա հանգեցնելու է պատերազմի եւ պետք է զինվել: Ես այն ժամանակ գաղտնի դիմեցի մի քանի հոգու, ում համարում էի մասնագետ՝ եթե այս պայքարը հանգեցնի պատերազմի, ինչով կավարտվի այն: Այդ իսկապես շատ հայրենասեր մարդիկ համարում էին, որ ամեն ինչ պետք է անել՝ խուսափելու պատերազմից, որովհետեւ զուտ ռեսուրսները հաշվի առնելով՝ Հայաստանը կպարտվի: Սակայն հասկանալի էր, որ դա միայն մեզանից չի կախված, որովհետեւ մեր դիմացինն անընդհատ մտածում էր պատերազմելու մասին, քանի որ կարծում էր, թե դա իր համար շահավետ կլինի: Բայց հետո ինքն ընկավ ծուղակի մեջ:

Ուստի «Ղարաբաղ» կոմիտեով մի կողմից առաջ էինք մղում հարցը սահմանադրական ճանապարհով լուծելու գաղափարը՝ ձգտելով օրենքների, միջազգային իրավունքի հարցում գործընկերներ գտնել ամբողջ աշխարհում, մյուս կողմից, հասկանալով պատերազմի անխուսափելիությունը, ինչ-որ ձեւով, այսպես ասած՝ տակից խրախուսում էինք կամավորական ջոկատների ստեղծումը: Առաջին ջոկատը, որ ստեղծվեց, անձամբ ինձ էր ենթարկվում: Դա աֆղանցիների ջոկատն էր: Հանրահավաքների ժամանակ հավաքվող գումարներով մարդկանց ուղարկում էինք զենք բերելու, ոմանք բռնվում էին, ոմանց հաջողվում էր, բայց մի բան եմ ուզում նշել՝ ոչ ոք այդ գումարներից ոչ մի կոպեկ չյուրացրեց:

hhpress.am

Հարցազրույցը՝ Գագիկ ՆԱՀԱՊԵՏՅԱՆԻ

13-02-2018

ՊՈԵԶԻԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ

էջ 5

անդաստանում ուրույն տեղ ունի Վ. Հակոբյանը: Ղարաբաղյան շարժման հենց սկզբից հնչեց խոր իմաստ ունեցող նրա երգը.

Ես երգ չունեմ Ղարաբաղի մասին...
Ղարաբաղը ծառ է իմ արմատի վրա,
Ղարաբաղը սեր է իմ հավատի վրա,
Ղարաբաղը տեր է իմ կարոտի վրա,
Ես երգ չունեմ Ղարաբաղի մասին:

Վ. Հակոբյանի բանաստեղծական ուղին դարձավ վերելքի ընթացք: 1988-ից սկսած, նրա պոետական հունձքը ներառում է «Արցախա ծուխ», «Տաճարն Աստծո», «Սոսե», «Մենարան», «Անդրադարձի տեսիլներ», «Թեւերի հեռուն», «Քարի շնչառությունը», «Բանաստեղծությունը՝ սահմանից դուրս», «Քրիստոսի ծաղիկները», «Նշագրություն լուսնի վրա» եւ այլ ժողովածուներ, որոնք արժանացան անվանի գրողների, գրաքննադատների, ընթերցողների լայն շրջանակների ջերմ ընդունելությանն ու բարձր գնահատականին: Ամենայն հայոց կաթողիկոս երջանկահիշատակ Վազգեն Առաջինը գրեց. «Վարդան Հակոբյանը տաղանդավոր բանաստեղծ է: ...Նրա մեջ խոսում է հայկական հավիտենական Արցախը»: Ակադեմիկոս Ս.Խանզադյանը նշեց. «Մեր բանաստեղծական հարուստ աշխարհում իր հոգու աշխարհն ունի բանաստեղծ Վարդան Հակոբյանը: Ֆիդայի է նա իր էությամբ, իր պոեզիան էլ՝ ֆիդայական»:

Ակադեմիկոս Ս.Աբրահամյանը գրեց. «Վարդան Հակոբյանը հայ բանաստեղծների պայծառ համաստեղության մեջ ունի իր հաստատուն տեղը: Բնությունից շռայլորեն նրան տրված տաղանդը նոր փայլատակումներ, նոր գույներ ու երանգներ բերեց հայ բանաստեղծական բարձր արվեստին՝ այն հարստացնելով մնայուն արժեքներով»:

Վ.Հակոբյանի պոեզիան գրականության փիլիսոփայության, պատմականության, պատկերավորության վառ արտահայտություն է:

1988 թվականին Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի փետրվարի 20-ի հայտնի նիստի որոշումն անմիջապես արձագանք գտավ հայ բանաստեղծների հոգում: Պոետ ու երգահան Գ.Գաբրիելյանը «Անկնիք վճիռ» բանաստեղծության մեջ մարզխորհրդի որոշումը գնահատեց որպես իմաստուն որոշում, որի շնորհիվ Արցախը կունենա իր սուրբ դրոշն ու զինանշանը, իր օրհներգը՝ անկախ եւ ազատ ապրելու իր սրբազան խորհրդանիշը:

Արցախ աշխարհի պատմական՝ Թարթառ, Կարկառ, Խաչեն գետերի, Մռով, Քիրս, Արեւսար լեռների, Ամարաս, Դադիվանք, Գանձասար վանքերի անունները դարձան բանաստեղծական մետաֆորներ՝ որպես դարերի խորքից դեպի գալիք քայլող քաջազուն զինվորյալներ: Հ.Բեգլարյանը՝ որպես Ղարաբաղյան շարժման ակտիվ ներկայացուցիչներից մեկը, ոգեշնչված փառաբանեց արցախցիների ազգային ինքնորոշման իրավունքը: Նրա «Հավատ» երկը 1988-ի ձմռանը ոտքի ելած արցախցիների արդարացի պահանջի խոսուն պատկեր է: Նրանում ներկայացված է Ստեփանակերտի կենտրոնական հրապարակը, ուր ձմեռվա բուք ու ցրտին մարդիկ հավաքվել էին պահանջատիրոջ վճռականությամբ:

Բանաստեղծը պապերից ժառանգած արցախցու հարստությունը նոր սերնդի բնավորության արժանիքներից է համարում, որը կոչված է նպաստելու ակնկալիք հաղթանակին: Դիմելով հայ ժողովրդի հին ու նոր թշնամիներին՝ բանաստեղծն ընդհանրացնում է.

Վկա է Աստված,
էլ այսուհետեւ
Մեր բախտի սայլը
Ձեր ուզած ճամփով
Մաշել չի կարող,
Մեր կողը պինդ է,
Որձաքարից պինդ:

Հ.Բեգլարյանի ստեղծագործական լուրջ հաջողություններից է «Ղարաբաղցին» բանաստեղծությունը, որի երաժշտությունը գրեց տաղանդավոր կոմպոզիտոր Ալ.Հեքիմյանը: Այն մտցված է հայկական տարբեր համույթների երգացանկը:

Արցախյան շարժումը ջերմ արձագանք գտավ ականավոր բանաստեղծների հոգում ու սրտում: Վ.Դավթյանն առաջիններից էր, որ Երեւանից «Արցախ» հանդեսի առաջին համարին ուղարկեց «Հայաստան» պոեմից մի հատված՝ «Արցախ» խորագրով:

Թ. Թորանյանն Արցախյան շարժմանն արձագանքեց Սիրիայից: Նա հայոց ազգային ճակատագիրը գնահատում է՝ ելնելով հայի համբերության ալեկոծման գերբնական սահմանից: Նա դիմում է Աստծուն 13-րդ դարի տաղերգու Ֆրիկի օրինակով, բայց՝ երեւույթի միանգամայն նոր ընկալմամբ, Աստծուն հանդիմանում է հայերի դեմ կազմակերպվող ոճիրների, նախճիրների հանդեպ անտարբեր մնալու համար: Աստված տեսավ նաեւ Սումգայիթի ու Բաքվի ջարդերը, տեսավ եւ դարձյալ մնաց անտարբեր: Այս դառն ցավի նկարագրության մեջ հայ բանաստեղծը Վերին Տիրոջ հանդիման ծնկի չի գալիս որպես մեղանչող: Նա «Աստուած եւ Արցախ» ստեղծագործության մեջ հենվում է պայքարի ելած Արցախի անկոտրում ուժին ու հավատին եւ ընդհանրացնում.

Մենք որ հոգնինք նախճիրներէ,
Կըսենք իրար՝ Տէրն քեզ օգնէ:
Դուն որ հոգնիս, Տեր-Տիրակալ,
Ըսէ, Քեզի ով թող օգնէ:
Ըսէ, եթե մենակ ես, Տեր,
Արցախն ըլլա քեզ օգնական:

Արցախն ու արցախցին մտան հայոց նորօրյա երգերի մեջ, թեւածեցին աշխարհով մեկ՝ մերթ Մռովի լանջերից դեպի Սփյուռք, մերթ՝ Սփյուռքից՝ Արցախ: Այդ առումով հատկանշական են Գերմանիայում բնակվող երգահան Լյուդվիգ Բազիլի եւ պարսկահայ բանաստեղծ Վարանդի համատեղ ուժերով գրված «Ղարաբաղ» ստեղծագործությունը, ֆրանսահայ բանաստեղծ-երգահան Ռիտա Չարչիյանի՝ Արցախին ընծայած երգը, որ դարձել էին ամենուրեք հնչող հոգու երազանք: Հեռավոր Ամերիկայում իր պոետական խոսքը հնչեցրեց Ժ. Հակոբյանը:

Արցախն ավարայրվելուն պես ազգային-ազատագրական պայքարի զինվոր-երգիչներ դարձան ստեղծագործող երիտասարդները: Նրանք նախ մարտնչեցին ֆիդայական ջոկատներում եւ ապա՝ Արցախի կանոնավոր բանակում: Մարտակերտի շրջանի Քոլատակ գյուղի միջնակարգ դպրոցի ուսուցիչ, բանաստեղծ Վաղարշակ Գաբրիելյանը թշնամու դեմ ելավ Չլդրան-Կիչան ռազմաճակատում, ծանր վիրավորվեց, սակայն զենքը ցած չդրեց՝ հայրենիքի ու սրտի ցավը հանձնելով իր երգերին: Ռոբերտ Եսայանը մասնակցեց բոլոր ճակատամարտերին՝ Արաքսի ափից մինչեւ Օմար: Արմեն Դանիելյանը, Գագիկ Բեգլարյանը, Արիս Գրիգորյանն իրենց զինակիցների հետ միասին մասնակցեցին վճռական մարտերին:

Երիտասարդ բանաստեղծներ Սամվել Շահմուրադյանը եւ Կոմիտաս Հակոբյանն Արցախի ազատությանն ընծայեցին ամենաթանկը՝ կյանքը: Հրանտ Ալեքսանյանը, Նորեկ Գասպարյանը, Սենոր Հասրաթյանը, Վարդգես Բաղրյանը՝ որպես հեռուստալրագրողներ, հաճախ վտանգելով կյանքը, ցուցաբերեցին ազատամարտիկին հատուկ սխրանքներ՝ միաժամանակ գրելով իրենց մարտական երգերը: Էռնեստ Եսայանը զենքով ու երգով իր խոսքն ասաց Մարտունու պաշտպանական դիրքերում, ուր հրաշքներ էր գործում Ավոյի (Մոնթե Մելքոնյան) զորավարական տաղանդը, որի մասին իր քնարական պոեմը գրեց նա: Լեռնիկ Հակոբյանը ստեղծագործական իր մկրտությունն ստացավ արցախյան բանակի շարքերում եւ էլի տասնյակ պատանի գրողներ, որոնք դեռեւս երգի մեջ չձեւավորված, իրենց կամքը ջրդեղեցին պատերազմական հրդեհների մեջ: Այսպես հյուսվեց հայրենասիրության նոր, երիտասարդական երգը, որ երանգներով հայկական է, միշտ զգոն, որովհետեւ անընդմեջ զգացվում է հարեւան քոչվոր ցեղերի սպառնալիքը: Այդ զգացումից են ծնված Ժ.Բեգլարյանի, Ա.Քոչարյանի, Ն.Գասպարյանի, Ռ.Եսայանի, Հ.Ալեքսանյանի, Կ.Հակոբյանի եւ այլոց բանաստեղծությունների շարքերը, որոնցում փառաբանված են հայրենի հողը, օջախը, հավատը, գալիքի բանալին հանդիսացող մայրենի լեզուն, որի վերաբերյալ իր թեւավորող խոսքն է ասել Ռ.Եսայանը.

Սակայն, առանց քեզ, մայրենի լեզու,
Առանց քո տառի պտղաբեր հպման,
Առանց քո բույրի, հողաշիթ գույնի
Եվ աղավնաթեւ քո հնչյունների...
Ես՝ Ես չեմ լինի:

Պատերազմական այն ահեղ օրերից անցել է երեք տասնյակ տարի: Այն ժամանակվա երիտասարդ պոետները հասունացել են ոչ միայն տարիքով, այլեւ ստեղծագործական կարողություններով: Վերջին տարիներին իրենց ընտրանիներով հանդես են եկել Ռ.Եսայանը, Ն.Գասպարյանը, Հ.Ալեքսանյանը, Դ.Միքայելյանը, Ժ.Բեգլարյանը, Տ.Սողոմոնյանը, Ս.Համբարձումյանը եւ ուրիշներ՝ կրկին ու կրկին ապացուցելով ազատ եւ անկախ ապրելու աստվածային հրամայականը, որի շնորհիվ միայն արվեստագետը կարող է լրիվ դրսեւորել Աստծո քարտուղարը լինելու իր սուրբ առաքելությունը: Ընթերցելով վերոհիշյալ պոետների նոր ժողովածուները՝ նկատում ես մարդու հուզաշխարհը թափանցելու եւ այն պատկերելու արդեն ձեւավորված հմտությունը: Միաժամանակ շոշափում ես այն հիմնական լեյտմոտիվը, որի առանցքում հայրենի եզերքի անվտանգության պաշտպանությունն ու զարգացումն է: Այդ գաղափարի փայլուն վկայությունն է Ռ.Եսայանի ընդհանրացումը.

Զինվում է ճանապարհը հավիտենությամբ:
Ոգի, որ սրբագործում է ճակատն ապագայի: **Արցախ**:
Երկիր, ուր սերն է հոսում,
Ինչպես արյան ճակատագիր:

Եվ պատահական չէ, որ Ռ.Եսայանը 2017-ին հրատարակած գիրքն անվանել է «Խաչ եւ սուր»:

* * *

Արցախյան գոյամարտի պոեզիան հարստացավ նաեւ հայ ժողովրդի պատմական անցյալի հերոսական դրվագների պատկերումով: Վ.Հակոբյանի տաղանդն այս ուղղությամբ եւս փայլեց: Նա վկայակոչեց մեր ոգու եւ սրի ժամանակաշրջանը՝ 5-րդ դարը, որ իմաստավորված է Մեսրոպ Մաշտոց-Վարդան Մամիկոնյան անմահների անձնուրաց գործունեությամբ: Բանաստեղծը «Մեսրոպ Մաշտոցն Ամարասում» պոեմում նրանց կերպարներն ստեղծեց՝ առնչված ժողովրդի ճակատագրին: Ապա նա ընթերցողին հանձնեց «Տաճարն Աստծո» պոեմը, որ Արցախի հերոսական անցյալի եւ մարտնչող ներկայի Ասք է՝ շաղախված կորուստների ծանր զգացումներով եւ ժառանգածի պահպանման անխառն մտորումներով: Բանաստեղծը դրանով իսկ ընդգծեց հայոց ոգու անմահությունը: Պոեմի պատումի մեջ Արցախի նահապետ, Հայկի ժառանգորդ Առանի տոհմից ազատամարտիկ Արմեն Հակոբյանն է հառնում, նրա գիտակցված մահից՝ մի նոր Առան, որ ընտրում է Սոսեներ ծնող Սաթենիկին եւ խորհրդանշում մեր ժողովրդի հավերժությունը իր աստեղամերձ սարերում:

Արցախյան գոյամարտին պատմական պոեմներ նվիրեցին նաեւ մյուս պոետները: Եթե Հ. Բեգլարյանը պատմությունը դիտում է որպես ժառանգափոխության անընդմեջ ընթացք («Խաչենաբերդ»), ապա Ն.Ավագյանը ձգտում է զննել կորուստների ցավը եւ իմաստավորել ժողովրդի դարավոր ճանապարհը («Կենսապատում»): Ս.Խանյանը, կոնկրետ անդրադառնալով 9-րդ դարում արաբական զավթիչների դեմ արցախցիների մղած հերոսական պայքարին, իշխան Եսայի ապու Մուսեի օրինակով ոգեշնչում ու թեւավորում է Արցախյան գոյամարտի զինվորյալներին («Արցախի արծիվը»): Ռոբերտ Եսայանն իր «Երազի սահանքներ» գրքում զետեղեց «Ապաշխարություն կամ հրաժեշտի 40 օրերը» պոեմը: Այստեղ բանաստեղծը ճեղքում է ժանրի ընդունված սահմանները թե՛ կոմպոզիցիայի եւ թե՛ սյուժեի տեսակետից: Պոեմում ներառված հարցերի բույլը քնարական հերոսին տանում է դեպի կենսափիլիսոփայության աշխարհ: Բանաստեղծը տարբեր խնդիրների քննարկումը վերածում է ապաշխարանքի՝ այն դարձնելով ինքնատիպ մի աղոթարան: Նրա երազի սահանքներն ակունքվում են մեր դարաշրջանի շերտերից, առանձնապես Արցախյան գոյամարտի թոհուբոհից:

* * *

Արցախյան պատերազմում մեր հաղթանակը փառքով պսակվեց հայոց խիզախ ազատամարտիկների անձնուրացության շնորհիվ: Հյուսվել ու հյուսվում է մեր սուրբ նահատակներին նվիրված անմահության երգը: Այդ առումով ուշադրության արժանի գործեր են Վ. Հակոբյանի «Գողգոթա», «Քրիստոսի ծաղիկները», Գ.Գաբրիելյանի «Մուսա լեռան երկու որդին», «Ողջակիզվող կյանք», Հ.Բեգլարյանի «Մոնթե-Ավո», Ս.Խանյանի «Նահատակ լուսո», Ն.Ավագյանի «Տիրոջ հետ», Ա.Քոչարյանի «Խնձորն արնափոսում», Է.Եսայանի «Զորավար Ավո» պոեմները, Ա.Թովմասյանի «Զգույշ քայլեք, մարդիկ» ռեքվիեմը, Դ.Միքայելյանի՝ երախտապարտ սրտերից հյուսված երգաշարը, որոնցում ընդգծված է այն գաղափարը, որ Արցախյան ազգային-ազատագրական պայքարը երեւան հանեց ոչ միայն հայ մարդու զինվորական սխրանքը, այլեւ զորավարական տաղանդը: Հիրավի, այդպես է: 2016-ի քառօրյա պատերազմը կրկին ապացուցեց, որ մեր արդարացի գոյամարտը դարձել է մի յուրօրինակ ռազմական դպրոց, որտեղ ձեւավորվել ու կոփվել են Ազգային հերոսներ՝ սպարապետ Վ.Սարգսյանը, անմահ նվիրյալներ Բեկորը, Լ.Ազգալդյանը, Ն.Դանիելյանը, Յու.Պողոսյանը, Վ.Բալայանը եւ ուրիշ դյուցազուններ:

Քնարական բանաստեղծությունների մի հոգեպարար փունջ են կազմում մարտիրոսված Ազգային հերոսների՝ Ռոբերտ Աբաջյանների անմար հիշատակին նվիրված երգերը:

Ընթերցելով այդ գործերը, լցվում ես թախծի եւ հպարտության զգացումներով, խոնարհվում բոլոր նահատակների անմեռ փառքի առջեւ, զգում նրանց կենդանի շունչը կյանքը շարունակողների շքերթներում:

Արցախյան ազգային-ազատագրական պայքարում արյան գնով նվաճված մեր ազատության երաշխավորը Հայոց պետությունն է, Հայոց բանակը, որոնց կայացման ճանապարհին երգի փոխված իրենց հոգու կրակներն են ցանում մեր բանաստեղծները՝ հաստատելով, որ հայրենիքի եւ ժողովրդի հարատեւման երաշխիքը զենքի եւ երգի միասնությունն է:

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ (0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ»
բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

QR-ԿՈԴ

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1210, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 26.02.2018թ.: